

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

**ՏԱՐԵԿԱՆ
ՈՒՂԵՑՈՅՑ—ԾՐԱԳԻՐ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ**

**ՍԱՂՄՈՍՆԵՐ, ԱՂՕԹՔՆԵՐ, ՇԱՐԱԿԱՆՆԵՐ
ԵՒ ԵՐԳԵՐ**

Գ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
(Բարեփոխել և ձոխացել)



**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ
ՎԱՅՑ. ԱՌԱՔ. Ս. ՅԱԿՈԲ
ՄԱՐԿՐԻՄԻԱՆ
1990**

ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻՐԱՆԱՆ
1990

Սոյն գիրքը կը հրատարակուի մեկեմասութեամբ
ԾԱԹԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

The Tzapik Baghdasarian Charitable Trust
The First National Bank of Boston, Trustee

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցներու Վարիչ Տնօրէնութիւնը, ընդառաջելով դպրոցներէն իրեն եկած խնդրանքներուն, կը վերահրատարակէ Կիրակնօրեայ դպրոցներու յատուկ տարեկան ուղեցոյց-ծրագիր գրքոյկը, խորքի եւ ձեւի որոշ փոփոխութեամբ: Այստեղ դրուած աղօթքները, մաղթանքները, սաղմոսները, ոսկեղէն համարները, շարականները եւ ազգային ու հոգեւոր երգերը պէտք է ճշգրտութեամբ եւ հետեւողական ձեւով ուսուցումին բոլոր աշակերտներուն:

Նախորդ տարիներու փորձառութեան լոյսին տակ մեր գործակիցներուն ուշադրութեան կ'ուզենք յանձնել հետեւեալ քանի մը հիմնական կէտերը.—

1. Սաղմոսներու եւ ոսկեղէն համարներու ուսուցման պարագային ուսուցիչները պարտին հետեւիլ Վարիչ Տնօրէնութեան թելադրանքներուն: Ուղեցոյց-ծրագրին մէջ տեղ գտած Սաղմոսներն ու ոսկեղէն համարները հարկ է որ **ՆՈՂՆՈՒԹԵԱՄԲ** սորվեցունին աշակերտութեան:

2. Աւետարանական հատուածներու համար կը յանձնարարենք գործածել Նոր Կտակարանի նորագոյն թարգմանութիւնը (հրատարակութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Աստուածաշունչի Լիբանանի ընկերութեան):

3. Առանձին մաղթանքներն ու որոշ աղօթքները — Հաւատով խոստովանիմ, Հաւատամբ — գրաբարով սորվեցնել, տալով միեւնոյն ժամանակ աշխարհաբարը որպէս բացատրութիւն:

4. Ջերմօրէն կը թելադրենք մեր ուսուցիչներուն՝ յատուկ ուշադրութիւն դարձնել շարականի ուսուցման: Անհրաժեշտ է որ իւրաքանչիւր ամիս նուազագոյնը երկու շարականներ ուսուցունին աշակերտութեան:

5. Ուղեցոյց-ծրագրին մէջ դրուած Ոսկեղէն համարները կրնան ուղեցոյց ծառայել նաեւ մեր ուսուցիչներուն կրօնական խորհրդածութեանց, որպէս առաջնորդող գեղեցիկ մտածումներ:

Վստահ ենք որ ուսուցիչներ այս գրքոյկները պիտի ցրտեն իրենց աշակերտներուն, որպէս տեսակ մը դասագիրք՝ լսարանային բաժնին յատուկ, ջանալով որ անոնք ժամանակի ընթացքին հետզհետէ գոց սորվին այնտեղ գտնուած բոլոր աղօթքները, մաղթանքները, սաղմոսները, ոսկեղէն համարները, շարականներն ու երգերը, որպէսզի թէ՛ անձնապէս եւ թէ՛ երգչախումբով կարենան զանոնք համարձակ արտասանել եւ երգել:

Մեր յոյսն է նաեւ որ աշակերտներու ծնողները եւ մեր եկեղեցոյ հաւատացեալները պիտի կարենան օգտուիլ այս գրքոյկէն եւ զայն գործածեն իրենց տուններուն մէջ, որպէս տեսակ մը ընտանեկան փոքրիկ աղօթագիրք:

Այստեղ կ'ուզենք մեր մասնաւոր շնորհակալութիւնները յայտնել Կաթողիկոսարանիս Քրիստոնէական Դաստիարակութեան եւ կրօնական հրատարակութեանց Բաժանմունքի Վարիչ Տնօրէն Գերշ. Տ. Զարեհ Ս. Եպս. Ազնաւորեանին, որ ազնուօրէն օժանդակեց մեզի ներկայ հատորին մէջ տեղ գտած Ոսկեղէն Համարներու, Սաղմոսներու, Աղօթքներու եւ Հոգեւոր Երգերու ընտրութեան եւ աշխարհաբար թարգմանութեան գործին մէջ:

ՍԵՊՈՒՀ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ,

Վարիչ Տնօրէն

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դպրոցներու



ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՑՈՅՑ)

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարաններու դասաւանդութիւնները տեղի կ'ունենան երկու բաժիններով. —

ա. — Լսարանական, որուն կը մասնակցին դպրոցի մը բոլոր ուսանողները հաւաքաբար,

բ. — Դասարանային, երբ աշակերտները կը ցրուին իրենց յատուկ դասարանները, ուր տեղի կ'ունենայ համապատասխան ուսուցում:

Ստորեւ կու տանք հիմնական կառուցուածքը լսարանական բաժնի ուսուցման բովանդակութեան, իր հիմնական գիծերուն եւ երեսներուն մէջ:

Ուսուցիչները պարտաւոր են հետեւիլ այս հիմնական դրութեան, որուն մէջ ամփոփուած են Ս. Գրական, ծիսական, աղօթական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ ու սորվելիքներ, համաձայն Հայց. Եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեան:

Ա. — ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ


— Տէրունական աղօթք
— Սաղմոսի ուսուցում

15 վայրկեան

- Մաղթանքի ուսուցում
- Շարականի ուսուցում 20 վայրկեան
- Աւետարանի ընթերցում եւ բացատրութիւն 15 վայրկեան
- Բարոյալից պատմութեան աւանդում 5 վայրկեան
- Նախորդ դասի շարականի երգեցողութիւն 5 վայրկեան
- Թելադրութիւններ եւ ծանուցումներ
- Ներկայ բացակայի ստուգում
- Կամաւոր նուէրներու հաւաքում

Բ. — ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

- Դասաւանդում ըստ դասագիրքերու 30 վայրկեան



ՍԱՂՄՈՍՆԵՐ

ՍԱՂՄՈՍ 1

1. Երանելի է այն մարդը,
որ ամբարիշտներու խորհուրդին չի հետեւիր,
մեղաւորներու ճամբէն չի քալեր,
եւ ծաղրողներու արթոններուն չի նստիր:
2. Այլ կը սիրէ Աստուծոյ օրէնքները
եւ գիշեր ցերեկ անոնց մասին կը խորհի:
3. Անկկա պիտի ըլլայ
առուակի մօտ տնկուած ծառի մը պէս,
որ ժամանակին իր պտուղը կու տայ.
անոր տերեւը պիտի չթափի,
եւ ինչ որ ընէ՝ պիտի յաջողի:
4. Սակայն այսպէս չե՛ն ամբարիշտները,
այսպէս չեն, բնա՛ւ.
նման են յարդի՝ որ հովը կը քշէ երկրի երեսէն:
5. Ահա թէ ինչու ամբարիշտները
պիտի չփրկուին Դատաստանէն.
մեղաւորները պիտի չդատուին արդարներուն հետ:
6. Որովհետեւ արդարներու կեանքն է
Տիրոջ համար ընդունելին.
ամբարիշտները իրենց ընթացքով
պիտի կորսուին:

ՍԱՂՄՈՍ 15 (14)

1. Տէր, ո՞վ արժանի պիտի ըլլայ

տաճարիդ մէջ ըլլալու,
ո՞վ արժանի պիտի ըլլայ
սուրբ լերանդ վրայ բնակելու.—

2. Ան՝ որ անմեղութեամբ կ'ապրի
եւ արդարութիւն կը գործէ.
որուն սրտէն ճշմարտութիւն կը բղխի.
3. Որ չի զրպարտեր բնաւ, իր ընկերոջ չարիք չ'ըներ,
եւ դրացին չի նախատեր:
4. Ան՝ որ չարագործներուն հետ յարաբերութիւն չ'ըներ,
մինչ կը յարգէ աստուածավախները.
որ յանձն կ'առնէ իր երդումը յարգելով վնաս կրել,
քան սուտ խօսիլ:
5. Ան՝ որ իր դրամը շահագործումի չի տար
եւ կաշառքի փոխարէն անմեղին իրաւունքը չ'ուտեր:
Այսպէս ապրողը երբեք պիտի չսասանի:

ՍԱՂՄՈՍ 19 (18), 8-12

8. Տիրոջ Օրէնքը կատարեալ է, մարդս կը վերանորոգէ.
Տիրոջ պատուէրը վստահելի է,
իմաստուն կը դարձընէ մանուկները:
9. Տիրոջ կանոնները ուղիղ են, սիրտը կ'ուրախացնեն.
Տիրոջ պատուիրանները լոյս են,
աչքերը կը լուսատրեն:
10. Տիրոջ վախը սուրբ է, եւ յաւետ անջնջելի.
Տիրոջ վճիռները ճշմարիտ են եւ միշտ արդար,
11. Աւելի ցանկալի՝ քան ոսկին կամ թանկագին քարերը,
աւելի քաղցր՝ քան մեղրը եւ կամ մեղրախորիսխը:
12. Ես, քու ծառադ, կը պահեմ կանոններդ,
որովհետեւ անոնք լիովին կը վարձատրեն պահողը:

ՍԱՂՄՈՍ 28 (22)

1. Տէ՛րն է հովիւս:
Կը հոգայ պէտքերս,
2. Դալար արօտավայրերու մէջ կը հանգչեցնէ զիս
եւ հանգստարար ջուրերու ափին կը սնուցանէ:
3. Կը վերանորոգէ զիս
եւ ուղիղ ճամբաներէ կ'առաջնորդէ,
որպէսզի իր անունը փառատրուի:
4. Նոյնիսկ եթէ մահուան շուքը ծանրանայ իմ վրաս՝
չարէն չեմ վախճար,
որովհետեւ դուն իմ հետս ես, Տէ՛ր:
Քու առաջնորդութիւնդ եւ պաշտպանութիւնդ
ապահովութիւն կու տան ինձի:
5. Արդարեւ ինձի համար
սեղան պատրաստեցիր թշնամիներուս առջեւ,
իւղով օծեցիր գլուխս
եւ ուրախութեան բաժակդ տուիր,
որ թունդ գինիի պէս արբեցուց զիս:
6. Տէր, վստահ եմ, ողորմութիւնդ անպակաս
պիտի ըլլայ վրայէս
կեանքիս ամբողջ տեսողութեան,
որպէսզի ընդմիշտ տաճարիդ մէջ բնակիմ:

ՍԱՂՄՈՍ 26 (25)

1. Դատե՛ զիս, Տէր, անմեղ եմ ես.
քեզի՝ Տիրոջ յուսացի, եւ պիտի չսասանիմ:
2. Փորձե՛ զիս, Տէր, քննե՛ զիս.
քու կրակովըդ փորձէ ցանկութիւնները սրտիս
եւ խորհուրդները մտքիս:
3. Որովհետեւ ողորմութիւնդ չհանեցի ես մտքէս,

- և հաճոյքս փնտոեցի՝ քու ճշմարտութեանդ մէջ:
4. Անպէտ մարդոց ընկերութիւն չըրի ես,
անօրէնին հետ բնաւ գործ չունեցայ:
 5. Ատեցի միշտ հաւաքոյթը չարերուն,
ամբարիշտին հետ բարեկամ ես չեղայ:
 6. Որպէս նշան անմեղութեան՝
պիտի լուսմ ձեռքերս
եւ սեղանիդ շուրջ դառնալով՝ սպասարկեմ քեզի, Տէր:
 7. Գոհութեան երգ պիտի երգեմ ես քեզի,
եւ քու բոլոր սքանչելի գործերդ վերապատմեմ:
 8. Տէր, սիրեցի վայելչութիւնը տանըդ,
այս յարկին՝ ուր քու փառքդ կը բնակի:
 9. Ամբարիշտներուն եւ ոճրագործին հետը միասին
գիւս ալ կորուստի մի՛ դատապարտեր:
 10. Անօրէնութեամբ թաթախուն եմ անոնց գործերը,
եւ անոնց աջը՝ կաշառքով լեցուն:
 11. Բայց ես անմեղ եմ.
ողորմէ՛ ինձի եւ փրկէ՛ զիս, Տէր:
 12. Անսայթաք պահէ իմ քայլերս միշտ,
եւ ես խմբուած ժողովուրդիդ հետ քե՛զ պիտի օրհնեմ:

ՍԱՂՄՈՍ 81 (80)

2. Դո՛ւն ես յոյսըս, ո՛վ Տէր, բնաւ
գիւս ամօթով մի՛ ձգեր.
ազատէ զիս եւ փրկէ՛ զիս,
որովհետեւ արդար ես:
3. Ականջդ ինձի՛ խոնարհեցուր
եւ փութա՛ զիս ազատել:
Ինձի պաշտպան, ապաստանարան եղիր
եւ փրկէ՛ զիս, ո՛վ Աստուած,

4. Որովհետեւ զօրութիւնըս
եւ ապաւեճըս դո՛ւն ես:
Ինչպէս որ ցարդ իբրեւ հովիւ
հովուեցիր զիս, պահեցիր;
5. Այժմ ալ դո՛ւրս քեր որոգայթէն
գաղտուկ ինձի դէմ լարուած,
որովհետեւ իմ պաշտպանըս
դո՛ւն ես, ո՛վ Տէր:
6. Ձեռքերուդ մէջ ես կ'աւանդեմ իմ հոգիս,
որովհետեւ փրկեցիր զիս, Տէր Աստուած,
քու խոստումիդ համաձայն:

ՍԱՂՄՈՍ 86 (85), 6-13

6. Տէր, ողորմութիւնդ միմչեւ երկինք կը հասնի,
ճշմարտութիւնդ՝ միմչեւ ամպերը:
7. Արդարութիւնդ լեռներուն պէս բարձր է, ո՛վ Աստուած,
դատաստաններդ՝ ծովերուն պէս խորունկ:
Մարդիկն ու կենդանիները դո՛ւն է որ կ'ապրեցնես, ո՛վ Տէր:
8. Այնքան առատ է ողորմութիւնդ, ո՛վ Աստուած,
որ բոլոր մարդիկ
թելերուդ հովանիին տակ կ'ուզեն ապաստանիլ:
9. Անոնք քու տանդ
պարարտ կերակուրներէն պիտի յագեցան,
երանութեան վտակներէդ պիտի խմցընես անոնց:
10. Որովհետեւ դո՛ւն ես կեանքի աղբիւրը, ո՛վ Տէր,
լոյսո՛վդ է որ մենք լոյսը կը տեսնենք.
11. Ողորմութիւնդ անպակաս ըլլայ վրայէն անոնց՝
որոնք քեզ կը ճանչնան,
արդարութիւնդ ալ անոնցմէ՝ որոնք սրտով ուղիղ են:
12. Մի՛ թողուր որ ամբարտաւան մարդիկ վրաս յարձակին,
կամ չարերու զօրութիւնը վախցընէ զիս:

13. Անօրէնութիւն գործողները բոլորն ալ հոն պիտի իյնան,
պիտի տապալին, եւ ա'լ պիտի չկարենան ոտքի կանգնիլ:

ՍԱՂՄՈՍ 87 (86), 1-15

1. Բնաւ չարերուն նմանիլ մի՛ ցանկար,
ոչ ալ անօրէնութիւն գործողներուն նախանձէ,
2. Որովհետեւ անոնք խոտի պէս պիտի չորնան,
դալար արօտի պէս շուտով պիտի խամրին:
3. Դուն Տիրոջ յուսա, բարիք գործէ
եւ այս ճոխ աշխարհին մէջ խաղաղութեամբ ապրէ:
4. Տիրոջմէ խնդրէ
եւ ան սրտիդ փափաքները պիտի տայ.
5. Ինքզինքդ Տիրոջ յանձնէ եւ անոր յուսա,
եւ անկկա պիտի հարթէ դժուարութիւններդ,
6. Լոյսի պէս երեսան պիտի հանէ արդարութիւնդ
եւ կէսօրուան պէս պայծառ պիտի ընէ քու իրաւունքդ:
7. Հնազանդէ Տիրոջ եւ ծառայէ իրեն.
մի՛ նախանձիր անոր որ կեանքին մէջ յաջողած է,
ոչ ալ անոր՝ որ անօրէնութեամբ կ'ապրի:
8. Զսպէ բարկութիւնդ, սանձէ զայրոյթդ
եւ մի՛ նախանձիր անոնց,
որպէսզի դուն ալ չչարանաս.
9. Որովհետեւ չարերը շուտով պիտի կորսուին,
մինչ անոնք որ համբերութեամբ Տիրոջ կը յուսան՝
անոնք պիտի ժառանգեն երկիրը:
10. Ամբարիշտը կարճ ժամանակ մը միայն կայ.
անկէ վերջ տեղն իսկ փնտռես՝ չես գտներ:
11. Բայց հեզերը իրենք պիտի ժառանգեն երկիրը
եւ ամբողջական խաղաղութեան մէջ պիտի ուրախանան:
12. Մեղաւորը միշտ արդարին դէմ չարութիւն կը ցուցնէ.
եւ առիթ կը փնտռէ իր զայրոյթը անոր վրայ թափելու.
13. Բայց Տերը ծաղրանքի առարկայ պիտի դարձնէ զայն,
որովհետեւ առաջուց գիտէ արդէն

- թէ վերահաս է անոր կորստեան օրը:
14. Մեղաւորները իրենց սուրերը հանեցին
եւ իրենց աղեղները լարեցին,
տապալելու համար աղքատն ու տնանկը,
սպաննելու համար ուղղամիտ մարդը:
 15. Բայց անոնց սուրերը իրենց իսկ սիրտը պիտի մտնեն,
եւ անոնց աղեղները պիտի փշրուին:

ՍԱՂՄՈՍ 43 (42)

1. Դատս տես, ո՛վ Աստուած,
եւ իրաւունքս պաշտպանէ ամբարիշտներէն.
անիրաւ ու նենգաւոր մարդոցմէ փրկէ՝ զիս:
2. Դո՛ւն ես նեցուկս, ո՛վ Աստուած,
ինչո՞ւ զիս մոռցար,
ինչո՞ւ համար տրտում ըլլամ
երբ թշնամիս կը նեղէ զիս:
3. Քու լոյսդ եւ ճշմարտութիւնդ որկէ, Տէ՛ր,
որպէսզի զիս առաջնորդեն եւ հանեն
քու սուրբ լեռդ, տաճարդ՝ ուր կը բնակիս.
4. Հո՛ն՝ Սեղանիդ դիմաց ըլլամ, ո՛վ Աստուած,
դուն՝ որ զիս կ'ուրախացնես երիտասարդութեանս մէջ,
եւ քնարով գովերգես քեզ, ո՛վ Աստուած, իմ Աստուածս:
5. Արդ, ալ ինչո՞ւ կը տխրիս, ո՛վ իմ անձս,
կամ ինչո՞ւ կը խոռվիս.
Աստուծոյ յուսա եւ գովերգէ զայն.
Աստուածս իմ փրկի՛չս է:

ՍԱՂՄՈՍ 51 (50)

3. Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, անսահման ողորմութեամբդ,
քու առատ գթութեամբդ իմ յանցանքս ներէ՛ ինձի:

4. Ամբողջութեամբ մաքրել զիս անօրէնութենէս,
եւ իմ մեղքէս զիս սրբէ՛:
5. Գիտեմ, յանցանք գործեցի,
մեղքս բնաւ մտքէս չ'ելլեր:
6. Քեզի, միայն քեզի՝ դեմ մեղանշեցի, Տէր,
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:
Ուստի արդար ես, ի՛նչ վճիռ ալ արձակես:
Իրաւունք ունիս, ի՛նչ պատիժ ալ սահմանես:
7. Անօրէն եմ ծնունդէս ի վեր,
մեղաւոր եմ մօրս յոյութեան պահէն սկսեալ:
8. Սակայն դուն, Տէ՛ր, որովհետեւ ճշմարտութիւնը կը սիրես,
իմ անգիտակից եւ ծածուկ յանցանքս
քու իմաստութեամբդ յայտնեցիր ինձի:
9. Ուստի սրբէ՛ զիս եւ պիտի մաքրուիմ.
լուս՝ զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
10. Յնճութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,
եւ տառապած ոսկորներս պիտի ցնծան:
11. Նկատի մի՛ առներ մեղքերս,
նեղե՛ բոլոր յանցանքներս:
12. Մաքուր սի՛րտ տուր ինձի, ո՛վ Աստուած,
նոր եւ ուղիղ հոգի՛ դիր իմ ներսիդիս:
13. Ներկայութենէդ մի՛ գրկեր զիս, Տէր,
եւ քու սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:
14. Փրկութիւնդ վաչելելու ցնճութիւնը տուր ինձի,
եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:
15. Որպէսզի անօրէններուն սէրդ ու ներումդ ստրկեցնես,
եւ ամբարիշտները քեզի դառնան:
16. Այս արեան պարտքէն փրկէ՛ զիս, Աստուած,
Աստուած, փրկիչս,
եւ լեզուս ցնճութեամբ արդարութիւնդ պիտի երգէ:
17. Բա՛ց իմ շրթներս, ո՛վ Տէր,
թող բերանս քեզի օրհնութի՛ւն երգէ:
18. Եթէ զոհ կամենայիր՝ պիտի մատուցանէի,
բայց ողջակէզ դուն չես ուզեր:

19. Ուզած զոհդ զղջումով լի հոգի մըն է, ո՛վ Աստուած,
հետեւեքար մի՛ մերժեր
զղջումնալից եւ ընկճուած իմ սիրտս:
20. Բարեացական եղիր Սիոնի հանդէպ,
որպէսզի Երուսաղէմի պարիսպները վերաշինուին:
21. Այն ատեն պիտի ընդունիս քաւութեան մեր զոհերը,
ուխտի նուէրներն ու ողջակէզները,
եւ քու զոհասեղանիդ դրուած զուարակները:

ՍԱՂՄՈՍ 67 (66)

2. Աստուած, ողորմէ՛ մեզի եւ օրհնէ՛ մեզ,
քու ներկայութեամբդ լուսաւորէ՛ մեզ,
3. Որպէսզի երկրի վրայ քու կամքդ ճանչնանք,
բոլոր ազգեր ճանչնան թէ դո՛ւն ես Փրկիչը:
4. Ժողովուրդներ թող գովեն քեզ, ո՛վ Աստուած,
ժողովուրդները բոլոր գոհաբանե՛ն քեզ:
5. Թող ազգերը ուրախանան ու ցնճան,
որովհետեւ արդարութեամբ կը դառնես ժողովուրդները,
եւ դո՛ւն կ'առաջնորդես ազգերը:
6. Ժողովուրդները թող գովեն քեզ, ո՛վ Աստուած,
ժողովուրդները բոլոր գոհաբանե՛ն քեզ:
7. Երկիրը իր պտուղը տուաւ.
Աստուած, մեր Աստուածը մեզ օրհնեց:
8. Օրհնէ՛ մեզ, ո՛վ Աստուած.
աշխարհի չորս անկիւններուն
բոլոր մարդիկ թող պատուե՛ն քեզ:

ՍԱՂՄՈՍ 84 (83)

2. Ի՛նչ սիրելի է՝ տաճարդդ,
ո՛վ Երկնային Զօրքերու Տէր.
3. Ամբողջ հոգւով կը ցանկամ եւ կը փափաքիմ
գալիքներուդ մէջ բընակիլ:

սիրտս ու մարմինըս ցնծութեամբ
կ'օրհնեցանք քեզ, կենդանի՝ Տէր:

4. Սեղանիդ քով ճննդուկին իսկ տուն տուիր դուն
եւ տատրակին բոյն՝ իր ձագերը հանելու,
ո՛վ Երկնային Զօրքերու Տէր,
թագաւոր իմ եւ Աստուած:
5. Երնէկ անոնց որ տանդ մէջ կը բընակին,
որովհետեւ անդադար քե՛զ պիտի օրհնեն:
6. Երնէկ անոր որուն դո՛ւն եւ օգնականը:
Երնէկ անոնց որոնք սրտանց փափաքեցան
քու տաճարդ ուխտի գալու.
7. Որովհետեւ հազիւ անոնք
անցնին Տրտմութեան Հովիտէն
եւ մօտենան ուխտավայրիդ,
դո՛ւն, բնութեան Օրէնսդիր,
նոր անձրեւով զանոնք կ'օրհնես:
8. Կը զօրացնես զանոնք տակաւ, աւելի եւ աւելի,
մինչեւ հասնին Սիոն, տաճար,
Աստուծոյդ առջեւ կանգնին:
9. Ո՛վ Երկնային Զօրքերու Տէր, լսե՛ աղօթքս, Աստուա՛ծ,
խնդրանքներս մտի՛կ ըրէ, ո՛վ Աստուած դուն Յակոբի.
10. Դուն մեր պաշտպանն ես, տե՛ս, ո՛վ Տէր,
եւ պահե՛ քու Օծեալըդ:
11. Կը նախընտրեմ գաւթիդ մէջ իմ անցուցած մէկ օրս,
քան թէ հազար ուրիշ օրեր գաւթէդ դուրս ապրուած:
Ծառ աւելի կը նախընտրեմ Աստուծոյ տան սեմին կանգնիլ,
քան ամբարիշտ ու մեղաւոր մարդոց տուները բընակիլ:
12. Մեր Տէրն Աստուած ողորմութիւն, ճշմարտութիւն կը սիրէ.
շնորհք ու փա՛ռք Տէրը կու տայ, եւ իր սիրով կ'ողողէ
անոնք՝ որոնք ամենեւին ամբիժ կեանքով մը կ'ապրին:
13. Ո՛վ Երկնային Զօրքերու Տէր եւ Աստուած,
երանի՛ է այն մարդուն՝ որ յոյսը քեզի՛ կը կապէ:

ՍԱՂՄՈՍ 90 (89), 14-17

14. Ամէն առաւօտ քու ողորմութեամբդ ողողէ մեզ,
որպէսզի ցնծանք եւ ուրախանանք
մեր կեանքի բոլոր օրերուն:
15. Երկար առէն տրտմեցուցիւ մեզ,
տարիներով չարչարուեցանք.
փոխարէնը՝ ուրախացո՛ւր մեզ հիմա:
16. Նայէ՛ քու ծառաներուդ, Տէր,
որոնք քու ձեռագործդ են,
եւ դո՛ւն առաջնորդէ մեր զաւակները:
17. Թող Տէր Աստուծոյդ աչքը մեր վրայ ըլլայ:
Մեր գործերը դո՛ւն ուղղէ, Տէ՛ր,
մեր գործերը յաջողէ՛:

ՍԱՂՄՈՍ 91 (90)

1. Բարձրեալ Աստուծոյ օգնութեան ապաւինողը
անոր հովանիին տակ հանգիստ պիտի գտնէ:
2. Այնպիսին Տիրոջ պիտի ըսէ.
«Իմ ապաստանս եւ ապաւե՛նս ես, ո՛վ Աստուած,
եւ քեզի՛ կը վստահիմ»:
3. Ա՛ն է որ քեզ պիտի փրկէ Որսորդին որոգայթէն
եւ խռովիչ խօսքերէն:
4. Արծիւի մը պէս՝ իր կոնակը պիտի առնէ քեզ,
եւ իր թռելուն տակ պիտի պատսպարուիս:
Իր ճշմարտութիւնը իբրեւ գրահ՝ պիտի պաշտպանէ քեզ:
5. Ո՛չ գիշերուան սարսափը քեզ պիտի վախցընէ,
ո՛չ ցերեկը թռչող նետը,
6. ո՛չ մութին մէջ շրջող մահը,
ո՛չ ալ կէսօրին հարուածող աղէտը:
7. Նոյնիսկ եթէ հազար հոգի իյնան ձախիդ,
եւ թէ տասը հազար հոգի իյնան աջիդ,

բայց ռեւէ հարուած բնաւ քեզի պիտի չմօտենայ:

8. Սակայն պիտի քու աչքերովդ տեսնես՝
թէ անհաւատ մարդոց ի՛նչպէս կը հատուցանէ Աստուած:
9. Այո՛, ո՛վ Տէր, դո՛ւն ես իմ ապաւէնըս:
Դուն՝ որ Բարձրեալը քեզի ապաւէն դարձուցիր՝
10. ռեւէ չարիք պիտի չհասնի քեզի,
ռեւէ փորձանք պիտի չմօտենայ քու տանըդ:
11. Տէրը քեզի համար իր հրեշտակներուն պատուէր տուած է՝
որ քեզ պահպանեն քու բոլոր ճամբաներուդ մէջ:
12. Իրենց ձեռքերուն վրայ պիտի բռնեն քեզ,
որպէսզի չըլլա՛յ բնաւ որ ոտքդ քարի մը զարնուի:
13. Իծերու եւ քարբերու վրայէն պիտի քալես,
առիծըն ու վիշապը ոտքի տակ պիտի առնես:
14. Տէրը կ'ըսէ. —
«Քանի ինծի վստահեցա՛ պիտի ազատեմ զինք.
հովանի պիտի ըլլամ իրեն, քանի զիս ճանչցա:
15. Երբ զիս կանչէ՛ պիտի լսե՛մ իր աղօթքը.
նշխարեան մէջ իր կողքին պիտի ըլլամ,
եւ պիտի փրկեմ ու փառաւորեմ զինք:
16. Երկար կեանքով պիտի առատացնեմ զինք
եւ իմ փրկութիւնս ցոյց պիտի տամ իրեն»:

ՍԱՂՄՈՍ 93 (92)

1. Տէրը կը թագաւորէ իր ամբողջ փառքով.
հզօր է ան, իր զօրքերով շրջապատուած:
2. Ինք երկիրը հաստատեց այնպէս՝ որ չսասանի բնաւ:
Քու աթոռդ անխախտելի է, սկիզբէն,
որովհետեւ դուն ժամանակներէն առաջ ես:
3. Թէպէտ ազգերը խռոված գետերու պէս բարձրացան, Տէ՛ր,
խռոված գետերու պէս իրենց ձայները բարձրացուցին
եւ իրենց ընթացքով քեզի դէմ ելան,
4. Սակայն ովկիանոսներու շառաչէն
եւ ծովուն ահարկու փոթորիկներէն

աւելի ահե՛ղ ես դուն, Տէ՛ր, քու բարձունքիդ մէջ:

5. Խոստումներդ բացարձակապէս վստահելի են, Տէ՛ր:
Սրբութիւնը քու տաճարի՛դ կը վայելէ յաիտեան:

ՍԱՂՄՈՍ 100 (99)

1. Տիրո՛ջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհ.
2. Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ,
ցնծութեամբ եկէք անոր ներկայութեան:
3. Գիտցէք թէ Տէրը ի՛նքն է Աստուածը:
Ա՛ն մեզ ստեղծեց, եւ մենք անորն ենք.
Իր ժողովուրդն ենք,
այն հօտը՝ որ ի՛նք կ'արածէ:
4. Գոհութիւն յայտնելով մտէք անոր տաճարը,
օրհներգութեամբ մտէք անոր յարկերէն ներս.
Ղնորհակալութիւն յայտնեցէք իրեն,
օրհնեցէք իր անունը:
5. Բարի է Տէրը,
անհկա յաւեւ ողորմած է,
եւ սերունդէ սերունդ կը կրկնէ
իր ճշմարիտ խոստումները:

ՍԱՂՄՈՍ 118 (112)

1. Օրհնեցէ՛ք Տէրը, ո՛վ ծառայողներ,
Տիրոջ անո՛ւնը օրհնեցէք:
2. Տիրոջ անունը օրհնեա՛լ ըլլալ,
այժմէն մինչեւ յաիտեան:
3. Արեւելքէն արեւմուտք
Տիրոջ անո՛ւնը օրհնեցէք:
4. Տէ՛րն է որ կ'իշխէ բոլոր ազգերուն վրայ,
երկինքներէն ալ վեր է անոր փառքը:
5. Ո՛վ կայ մեր Տէր Աստուծոյն նման,

- որ բարձունքներուն մէջ կը բնակի
6. Եւ կը դիտէ վար՝ ինչ որ կայ
երկնքի մէջ ու երկրի վրայ:
 7. Խեղճութենէն դուրս կը բերէ տկարները,
յետին թշուառութենէն կը բարձրացնէ չքաւորները
 8. Եւ զանոնք կը նստեցնէ իշխաններու կողքին,
իր ժողովուրդի իշխաններուն հետ:
 9. Ամու կնոջ դիրքը կը վերահաստատէ իր ընտանիքին մէջ՝
գաւակներով երջանիկ մայր դարձընելով:

ՍԱՂՄՈՍ 116 (114)

1. Սիրեցի Տէրը,
որովհետեւ իմ աղօթքս եւ աղաչանքս լսեց.
2. Ականջ տուաւ իմ ձայնիս
ամէն անգամ որ օգնութեան կանչեցի:
3. Երբոր մահուան տագնապը զիս պաշարեց
եւ դժոխքի վախերը զիս բռնեցին,
երբ նեղութիւն եւ անձկութիւն ունեցայ՝
4. Տիրոջ անունը կանչեցի, ըսելով.
«Ո՛վ Տէր, փրկէ՛ զիս»:
5. Ողորմած եւ արդար է Տէրը,
մեր Աստուածը կ'ողորմի:
6. Տէրը կը պահէ անմեղ մարդիկը.
եւ խոնարհ եղայ եւ Տէրը փրկեց զիս:
7. Հանդարտէ, ո՛վ իմ անձս,
որովհետեւ Տէրը բարի եղաւ քեզի հանդէպ:
8. Տէրը զիս մահուրէն փրկեց,
աչքես արցունքը սրբեց,
եւ ոտքերս խոշընդոտներէ պահեց.
9. Ուստի Տիրոջ ներկայութեան պիտի ապրիմ
ողջերու երկրին մէջ:

ՍԱՂՄՈՍ 118 (117), 1 եւ 19-29

1. Գոհութիւն յայտնեցէք Տիրոջ՝ իր բարութեան համար,
անոր ողորմութիւնը յաիտեան է:
19. Բացէ՛ք ինձի արդարութեան դուռը,
որպէսզի ներս մտնեմ անկէ
եւ գոհութիւնըս մատուցանեմ Տիրոջ:
20. Տիրոջ դո՛ւն է ասիկա,
ասկէ միայն արդարները ներս կը մտնեն:
21. Գոհութիւն քեզի, Տէ՛ր,
որ լսեցիր աղաչանքս եւ զիս փրկեցիր:
22. Այն վեմը, որ շինողները մերժեցին գործածել,
անկիւնաքար եղաւ:
23. Տէրը ի՛նք այդպէս ուզեց,
եւ արդարեւ սքանչելի է մեր աչքերուն:
24. Այսօ՛ր է Տիրոջ յաղթանակի օրը.
եկէք ցնծութեամբ եւ ուրախութեամբ լեցընենք զայն:
25. Ո՛վ Տէր, եկուր փրկէ՛ մեզ.
առաջնորդէ՛ մեզ, ո՛վ Տէր:
26. Օրհնեա՛լ ես դուն՝ որ Տիրոջ անունով կու գաս.
Տիրոջ տան մէջ կ'օրհներգե՛նք քեզ:
27. Տէրը մեր Աստուածն է եւ երեցաւ մեզի.
ոստեր բռնած՝ ուրախ թափօ՛ր կազմեցէք,
մինչեւ շուրջ բոլորը զոհասեղանին:
28. Դո՛ւն ես իմ Աստուածս, գոհութիւն քեզի.
Աստուա՛ծըս ես դուն, հազար փա՛ռք քեզի:
29. Գոհութիւն յայտնեցէք Տիրոջ՝ իր բարութեան համար,
անոր ողորմութիւնը յաիտեան է:

ՍԱՂՄՈՍ 119 (118), 1-2 եւ 9-20

1. Երանի՛ անոնց, որոնք անբիժ կեանք մը կ'ապրին,
որոնք Տիրոջ օրէնքներով կը քալեն:

2. Երանի՜ անոնց, որոնք Տիրոջ վկայութիւնները կը քննեն
եւ ամբողջ սրտով կ'ուզեն իրեն հետեւիլ:
9. Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ իր կեանքը ուղղել,
եթէ ոչ՝ քու խօսքերուդ հնազանդելով:
10. Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի՜ հետեւիլ.
մի՛ թողուր որ պատուիրաններդ հեռանամ:
11. Սրտիս մէջը պահեցի քու խօսքերդ
որպէսզի չմեղանչեմ քեզի դէմ:
12. Օրհնեա՛լ ես, Տէ՛ր,
սորվեցո՛ւր ինծի քու կանոններդ:
13. Իմ շրթներս պիտի կրկնեն
պատգամած օրէնքներդ:
14. Քու պատուէրնե՛րդ եղան ամբողջ հարստութիւնըս,
անոնց հետեւելուն մէջ գտայ ուրախութիւնըս:
15. Պատուիրաններդ սորվիլը եղաւ մտահոգութիւնս,
եւ ջանացի ճամբաներուդ հետեւիլ:
16. Օրէնքներուդ մասին խորհեցայ միշտ
եւ խօսքերդ բնաւ մտքէս չհանեցի:
17. Վարձատրէ՜ զիս, քու ծառայ,
որպէսզի ապրիմ եւ խօսքերուդ հնազանդիմ:
18. Բա՛ց աչքերս,
որպէսզի Օրէնքիդ սքանչելի ճշմարտութիւնները տեսնեմ:
19. Երկրիս վրայ պանդուխտ եմ ես.
մի՛ ծածկեր քու պատուիրաններդ ինձմէ:
20. Անձկութեամբ փափաքեցայ
որ ու գիշեր օրէնքներդ սորվելու:

ՍԱՂՄՈՍ 119 (118), 89-105

89. Տէ՛ր, քու խօսքդ յափտեա՛ն կը մնայ երկնքի մէջ.
90. Քու ճշմարտութիւնդ նո՛յնն է
բոլոր սերունդներուն համար:
91. Երկիրը հաստատեցիր, եւ կը մնայ.
մինչեւ այսօր ամէն ինչ քու հրամանովդ կը գոյատևէ,

- որովհետեւ բոլորն ալ քու ծառաներդ են:
92. Եթէ Օրէնքդ ուրախութիւնս չըլլար՝
չատոնց կորստած կ'ըլլայի տառապանքիս մէջ:
93. Բնաւ պիտի չմոռնա՛մ կանոններդ,
որովհետեւ անոնցմով կեանք տուիր ինծի:
94. Քո՛ւկդ եմ ես, փրկէ՛ զիս,
որովհետեւ կանոններուդ հնազանդ եղայ:
95. Մեղաւորները առիթ փնտռեցին զիս կորուստի մատնելու,
բայց ես քու պատուէրներուդ համաձայն շարժեցայ:
96. Տեսայ որ ամէն կատարելութիւն սահմանափակ է,
մինչ պատուիրաններդ լայն ազատութիւն կու տան ինծի:
97. Ո՛րքան սիրեցի քու Օրէնքդ, Տէ՛ր,
ամբողջ օրը անոր մասին կը խորհիմ:
98. Պատուիրաններդ թշնամիներէս աւելի
իմաստուն ըրին զիս,
որովհետեւ յաւեա ի՛մս ըրի զանոնք:
99. Բոլոր ուսուցիչներէս աւելի իմաստուն եղայ,
որովհետեւ պատուէրներդ էին
մտածումներուս առանցքը:
100. Ծերերէն աւելի իմաստուն եղայ,
որովհետեւ պատուիրաններդ կատարեցի:
101. Բոլոր չար գործերէն հրաժարեցայ,
որպէսզի քու խօսքերուդ հետեւիմ:
102. Հրահանգներդ չշեղեցայ,
որովհետեւ դուն ինծի օրէնք սորվեցուցիր:
103. Ի՛նչքան քաղցր են քու խօսքերդ իմ քիմքիս,
աւելի քաղցր՝ քան մեղրը իմ շրթներուս:
104. Պատուիրաններովդ իմաստնացած՝
ատեցի բոլոր չար ճամբաները,
որովհետեւ դուն ինծի օրէնք սորվեցուցիր:
105. Խօսքդ ճրրա՛գ է քայլերուս,
եւ լոյս կու տայ ճամբաներուս:


ՍԱՂՄՈՍ 128 (122)

1. Աչքերս քեզի՝ բարձրացուցի Տէր,
որ երկինք կը բընակիս:
2. Ինչպէս ծառայ մը աչքերը իր տիրոջմէ չի կտրեր,
եւ ինչպէս աղախին մը իր աչքերը իր տիկնոջմէ չի կտրեր,
այնպէս ալ մեր աչքերը քեզի՝ կը նային,
ո՛վ Տէր, մեր Աստուածը, մինչեւ ողորմիս մեզի:
3. Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, ողորմէ՛ մեզի,
որովհետեւ շատ եղաւ մեր կրած արհամարհանքը:
4. Չափէն աւելի՝ եղաւ
մեր կրած նախատիներ՝ հարուստներէն,
եւ արհամարհանքը՝ ամբարտաւան մարդոցմէ:

ՍԱՂՄՈՍ 149 (148)

1. Օրհնեցէք Տէրը երկինքէն,
բարձունքներէ՛ն օրհնեցէք զայն:
2. Օրհնեցէ՛ք զայն բոլորդ, ո՛վ անոր հրեշտակներ,
օրհնեցէ՛ք զայն բոլորդ, ո՛վ երկնային բանակներ:
3. Օրհնեցէ՛ք զայն, ո՛վ դուք՝ արեւ ու լուսին,
օրհնեցէ՛ք զայն բոլորդ, ո՛վ դուք՝ լուսատու աստղեր:
4. Օրհնեցէ՛ք զայն, ո՛վ բարձրագոյն երկինքներ,
եւ երկինքներէն վեր գտնուող ջուրեր:
5. Թող անոնք Տիրոջ անունը օրհնեն,
որովհետեւ անոր խօսքով գոյացան,
իր հրամանով ստեղծուեցան:
6. Չանոնք յափտեանս յափտենից հաստատեց,
եւ ո՛չ մէկը անոր դրած սահմաններէն դուրս կու գայ:
7. Օրհնեցէք Տէրը երկրէն,
վիշապներ եւ անդունդներ,
8. Կայծակ, կարկուտ, ձիւն եւ սառ, հով ու մորիկ,
որ անոր խօսքին կը հնազանդիք:

9. Լեռներն ու բոլոր բլուրները,
պտղաբեր ծառերն ու բոլոր մայրիները,
10. Գազաններն ու բոլոր անասունները,
սողունները եւ բոլոր թեւաւոր թռչունները,
11. Աշխարհի թագաւորներն ու բոլոր ժողովուրդները,
իշխանները եւ երկրի բոլոր դատաւորները,
12. Երիտասարդներն ու կոյսերը,
ծերերն ու մանուկները
13. Թող Տիրոջ անունն օրհնեն,
որովհետեւ միայն Տէրն է իշխողը,
անոր փառքը կը տեսնուի թէ՛ երկինքի, թէ՛ երկրի վրայ:
14. Տէրը պիտի զօրացնէ իր ժողովուրդը,
որպէսզի իր բոլոր սուրբերը, իսրայէլի որդիները
եւ իրեն հաւատարիմ մնացող ժողովուրդը զինք օրհնեն:



ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐՆԵՐ

- † Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին համաձայն,
Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծեց զայն,
արու եւ էգ ստեղծեց զանոնք: (Ծննդոց 1.27)
- † «Հող եւ դուն եւ հողին պիտի դառնաս»: (Ծննդոց 3.19)
- † «Եթէ ուղիղ չվարուիս՝ մեղքի մէջ կ'իյնաս: Մեղքը քեզի
կ'ըսպասէ, բայց դուն պէտք է իշխես անոր»: (Ծննդոց 4.7)
- † «Զեզ իմ ժողովուրդս պիտի ընեն եւ ձեզի Աստուած պիտի
ըլլամ»: (Ելք 6.7)
- † «Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի երկար օրեր ապրիս
այն երկրին մէջ, որ քու Տէր Աստուածդ քեզի կու տայ»: (Ելք 20.12)
- † «Ահա քու առջեւէդ հրեշտակ մը կը դրկեն, որ քեզ ճամբուն
մէջ պահպանէ»: (Ելք 23.20)
- † «Սուրբ եղէք, որովհետեւ ես՝ ձեր Տէր Աստուածը՝ սուրբ եմ»: (Ղեւտացոց 19.3)
- † «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: (Ղեւտացոց 19.18)
- † «Զեզմէ՛ ռեւէ մէկը իր ընկերոջ անիրաւութիւն թող չընէ»: (Ղեւտացոց 25.14)
- † Այն անձը որ լանդզնութեամբ մեղք կը գործէ՝ Տէրը կը
նախատէ: (Թուոց 15.30)
- † Դատաստանը Աստուծոյ է: (Բ. Օրինաց 1.17)
- † Մեր Տէր Աստուածը մեզի մօտ է, ամէն անգամ որ իրմէ
օգնութիւն կը խնդրենք: (Բ. Օրինաց 4.7)

- † Եթէ ամբողջ սրտովդ եւ ամբողջ հոգիովդ զԱստուած
փնտռելու ըլլաս, պիտի գտնես: (Բ. Օրինաց 4.29)
- † «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ՝ ամբողջ սրտովդ, ամբողջ
հոգիովդ եւ ամբողջ զօրութեամբդ»: (Բ. Օրինաց 6.5)
- † Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ բոլոր այն խօսքերով որ
Աստուած խօսած է: (Բ. Օրինաց 8.3)
- † Չըլլա՛յ որ սիրտդ հպարտանայ եւ քու Տէր Աստուածդ
մոռնաս: (Բ. Օրինաց 8.14)
- † «Քու երկրիդ մէջ եղող աղքատ ու չքատր եղբայրներուդ՝
ձեռքդ միշտ բա՛ց թող ըլլայ»: (Բ. Օրինաց 15.11)
- † Կաշառքը իմաստուններուն աչքը կը կուրցընէ, եւ
արդարներուն խօսքերը կը թիրէ: (Բ. Օրինաց 16.19)
- † Արդարութեան, միայն արդարութեան հետեւող եղիր,
որպէսզի ողջ մնաս եւ քու Տէր Աստուծոյդ քեզի տալիք
երկիրը ժառանգես: (Բ. Օրինաց 16.20)
- † «Զօրացիր ու քա՛ջ եղիր: Մի՛ վախճար բնաւ եւ մի՛
վարանիր, որովհետեւ ես՝ քու Տէր Աստուածդ, քու հետդ
եմ ո՛ւր որ ալ երթաս»: (Յեսու 1.9)
- † Տիրոջ համար՝ հնազանդութիւնը զոհէն եւ խօսք մտիկ ընելը
խոյերու ճարպէն շատ ատելի լաւ է: (Ա. Թագաւորաց 15.22)
- † Թշուառութեան մէջ եղողին՝ իր բարեկամին կարեկցութիւնը
պէտք է: (Յոբ 6.14)
- † Տէրը իմ լոյսս եւ փրկութիւնս է, եւ որմէ՞ պիտի վախճամ.
Տէրը իմ կեանքիս ապաւենն է, եւ որմէ՞ պիտի դողամ:
(Սաղմոս 27.1)
- † Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն
եւ ականջները պատրաստ են անոնց աղօթքները լսելու:
(Սաղմոս 37.27)
- † Արդարներուն փրկութիւնը Տիրոջմէն է.

Նեղութեան ժամանակ ի՛նքն է անոնց ապաւենը: (Սաղմոս 37.39)

† Երանի՛ անոր որ աղքատին հոգ կը տանի.

Նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զայն: (Սաղմոս 41.1)

† Քու հոգերդ Տիրոջ վրայ ձգէ, եւ ինքը քեզի հոգ պիտի տանի: (Սաղմոս 55.22)

† Տէրը բարիք կ'ընէ բարիներուն եւ սրտով ուղիղներուն: (Սաղմոս 125.4)

† Ամբողջ սրտովդ Տիրո՛ջ յուսա, եւ քու իմաստութեանդ մի՛ ապաւինիր: (Առակաց 3.5)

† Տէրը հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհք կու տայ: (Առակաց 3.34)

† Մեծ զգուշութեամբ հսկէ սրտիդ վրայ, որովհետեւ պատուէրներուս կատարումէն կախում ունի քու կեանքդ: (Առակաց 4.23)

† Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնէ: (Առակաց 10.1)

† Ամէն աշխատանքի մէջ օգուտ մը կայ. բայց դատարկաբանութիւնը մարդս միայն կարօտութեան կը տանի: (Առակաց 14.23)

† Որդիներուն պարծանքը իրենց հայրերն են: (Առակաց 17.6)

† Արդարութեան ու ողորմածութեան հետեւողը՝ կեանք, արդարութիւն եւ փառք պիտի գտնէ: (Առակաց 21.21)

† Բարի անունը մեծ հարստութենէն աւելի նախընտրելի է, շնորհքը ոսկիէն ու արծաթէն աւելի լաւ է: (Առակաց 22.1)

† Աստուծմէ վախցիր եւ անոր պատուիրանները պահէ, որովհետեւ մարդուս ամբողջ պարտականութիւնը ատիկա է: (Ժողովող 12.13)

† Արդարներու հոգիները Աստուծոյ ձեռքին մէջ են: (Իմաստութիւն 3.1)

† Բարիք գործեցէք, որպէսզի չարիք չպատահի ձեզի: (Տովբիթ 12.7)

† «Եթէ չհաւատաք՝ հաստատուն պիտի չըլլա՛ք» (Եսայի 7.9)

† «Երկիրը Տիրոջ գիտութեամբը պիտի լեցուի, ինչպէս ջուրերը կը ծածկեն ծովը»: (Եսայի 11.9)

† Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս թեւ ու թռիչք ունենան. պիտի վազեն առանց թուլնալու, պիտի քալեն առանց յոգնելու: (Եսայի 40.31)

† «Իմ խորհուրդներս ձեր խորհուրդներուն պէս չեն, իմ ճամբաներս ձեր ճամբաներուն չեն նմանիր,— կ'ըսէ Տէրը:

Այլ, որքան երկինքը բարձր է երկրէն՝ այնքան բարձր են իմ ճամբաներս ձեր ճամբաներէն, եւ իմ խորհուրդներս՝ ձեր խորհուրդներէն»: (Եսայի 55.8-9)

† Օրհնեա՛լ ըլլայ այն մարդը որ Տիրոջ կ'ապաւինի եւ անոր յոյսը Տէրն է: (Երեմիա 17.7)

† «Ամբարիշտին մեռնիլը չէ՛մ ուզեր,— կ'ըսէ Տէրը,— այլ կ'ուզեմ որ ամբարիշտը իր չար ճամբայէն դառնայ եւ փրկուի»: (Եզեկիէլ 33.11)

† «Ես ողորմութիւն կ'ուզեմ ձեզմէ, ո՛չ թէ զոհ. ողջակէզներէն աւելի՝ կ'ուզեմ որ Աստուծոյ գիտութիւնը ունենաք»: (Ովսէէ 6.6)

† Տէ՛րը փնտռեցէք, որպէսզի ապրիք: (Ամովս 5.6)

† Տէրը քեզի յայտնեց, ո՛վ մարդ, թէ ի՛նչ է աղէկը, եւ քեզմէ ի՛նչ կը պահանջէ. կը պահանջէ՝ որ իրաւունք ընես, ողորմութիւնը սիրես, եւ խոնարհութեամբ քու Աստուծոյդ հետ քալես:

(Միքիէ 6.8)

- † Տէրը իրեն ապաւինողները կը ճանչնայ: (Նաում 1.7)
- † Արդարը իր հաւատքով պիտի փրկուի: (Ամբակում 2.4)
- † Բու Տէր Աստուածդ իր սիրովը քեզի թողութիւն պիտի տայ, եւ քու վրայ ջնջութեամբ պիտի ուրախանայ: (Սոփոնիա 3.17)
- † «Իմ Հոգիս ձեր մէջ կը մնայ, մի՛ վախճաք»: (Անգէոս 2.5)
- † «Ահա ես կու գամ եւ քու մէջդ պիտի բնակիմ» կ'ըսէ Տէրը: (Զաքարիա 2.10)
- † «Զեզի, իմ անունէս վախճողներուդ, արդարութեան արեգակը պիտի ծագի»: (Մաղաքիա 4.2)
- † «Դուք էք աշխարհի լոյսը»: (Մատթէոս 5.14)
- † «Զեր լոյսը թող այնպէ՛ս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է»: (Մատթէոս 5.16)
- † «Կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»: (Մատթէոս 5.48)
- † «Խնդրեցէք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի. փնտռեցէք եւ պիտի գտնէք. քաղիւցէք եւ պիտի բացուի ձեզի»: (Մատթէոս 7.7)
- † «Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի՝ նո՛յնը ըրէք դուք անոնց»: (Մատթէոս 7.12)
- † «Ով որ մինչեւ վերջը դիմանայ՝ անիկա պիտի փրկուի»: (Մատթէոս 10.22)
- † «Մի՛ վախճաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախճէք մանաւանդ անկէ (= Աստուծմէ), որ կրնայ հոգին եւ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ»: (Մատթէոս 10.28)
- † «Ինծի՛ եկէք դուք բոլորդ, յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի: Զեր վրայ առէք իմ լուծս

եւ ինձմէ սորվեցէք, որովհետեւ հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ դուք ձեր հոգեկան հանգստութիւնը պիտի գտնէք. քանի իմ լուծս դիրսւ տանելի է, եւ բեռս՝ թեթեւ»: (Մատթէոս 11.28-30)

- † «Ոեւէ թագաւորութիւն որ ինքն իր մէջ բաժան-բաժան կ'ըլլայ՝ կը կործանի, եւ ոեւէ քաղաք կամ ընտանիք որ ինքն իր մէջ բաժնուած է՝ կանգուն չի մնար»: (Մատթէոս 12.25)
- † «Ի՞նչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ոեւէ բանով չի կրնար իր կեանքը ետ առնել»: (Մատթէոս 16.26)
- † «Եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին ոեւէ խնդրանքի համար, ի՞նչ որ ալ խնդրեն՝ երկնաւոր Հայրս պիտի կատարէ առիկա»: (Մատթէոս 18.19)
- † «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ՝ գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այսպիսով երկինքի մէջ գանձեր պիտի ունենաս, եւ յետոյ հետեւէ ինծի»: (Մատթէոս 19.21)
- † «Աստուծոյ համար ամէն բան կարելի է»: (Մատթէոս 19.26)
- † «Եթէ հաւատաք, ի՞նչ որ աղօթքով խնդրէք՝ պիտի ստանաք»: (Մատթէոս 21.22)
- † «Ինչ որ կայսրին կը պատկանի՝ կայսրին տուէք, եւ ինչ որ Աստուծոյ՝ Աստուծոյ տուէք»: (Մատթէոս 22.21)
- † «Արթուն մնացէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք»: (Մատթէոս 26.41)
- † «Փրկութեան ժամանակը հասած է եւ եկած՝ Աստուծոյ արքայութիւնը. ապաշխարեցէք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»: (Մարկոս 1.15)
- † «Մի՛ վախճար. միայն հաւատա՛» (Մարկոս 5.36)
- † «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ

- իր խաչը եւ ետեւէս գալ»: (Մարկոս 8.34)
- † «Ամէն ինչ կարելի է անոր համար որ կը հաւատայ»: (Մարկոս 9.22)
- † «Ով որ Աստուծոյ արքայութիւնը չ'ընդունիր փոքրիկի մը պէս, հոն պիտի չմտնէ»: (Մարկոս 10.15)
- † «Եթէ դուք ուրիշին չներէք՝ ձեր երկնաւոր Հայրն ալ ձեր մեղքերը պիտի չներէ»: (Մարկոս 11.26)
- † «Երբ մեռելներէն յարութիւն առնեն՝ մարդիկ եւ կիներ պիտի չամուսնանան, այլ երկինքի հրեշտակներուն նման պիտի ըլլան»: (Մարկոս 12.25)
- † «Գացէք ամբողջ աշխարհը եւ բոլոր մարդոց քարոզեցէք Աւետարանը»: (Մարկոս 16.15)
- † «Այն ծառը որ բարի պտուղ չի տար՝ պիտի կտրուի եւ կրակ նետուի»: (Ղուկաս 3.9)
- † «Գթասիրտ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն ալ գթասիրտ է»: (Ղուկաս 6.36)
- † «Մի՛ դատէք, որպէսզի Աստուած ալ ձեզ չդատէ. մի՛ դատապարտէք, որպէսզի Աստուած ալ ձեզ չդատապարտէ»: (Ղուկաս 6.37-38)
- † «Ինչո՞ւ եղբօրդ աչքին մէջ գտնուող շիղը կը տեսնես, բայց քու աչքիդ գերանը չես նշմարեր»: (Ղուկաս 6.41)
- † «Տունդ դարձիր եւ պատմէ ինչ որ Աստուած քեզի ըրաւ»: (Ղուկաս 8.39)
- † «Երանի՛ անոնց, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն զայն»: (Ղուկաս 11.28)
- † «Ինչ որ կրնաք՝ տուէք իբրեւ ողորմութիւն, եւ ամէն ինչ մաքուր պիտի ըլլայ ձեզի համար»: (Ղուկաս 11.41)
- † «Զգուշացէ՛ք ազահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ

- մարդու մը կեանքը կախեալ չէ իր ամբարած հարստութենէն»: (Ղուկաս 12.15)
- † «Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է՝ մեծիմ մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է՝ մեծիմ մէջ ալ անհաւատարիմ է»: (Ղուկաս 16.10)
- † «Ո՛չ մէկ ծառայ կրնայ երկու տէրերու ծառայել, որովհետեւ կա՛մ մէկը պիտի աւտէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Չէք կրնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին»: (Ղուկաս 16.13)
- † «Հօրս տունը վաճառատան մի՛ վերածէք»: (Յովհաննէս 2.16)
- † «Մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ զարմանար որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիք»: (Յովհաննէս 3.6-7)
- † «Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաիտենական կեանք ունենայ»: (Յովհաննէս 3.16)
- † «Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր»: (Յովհաննէս 3.18)
- † «Ով որ կը հաւատայ Որդիին՝ յաիտենական կեանքը կ'ունենայ. իսկ ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանք պիտի չունենայ, այլ Աստուծոյ պատիժը պիտի գայ անոր վրայ»: (Յովհաննէս 3.36)
- † «Ով որ իմ տալիք ջուրէն խմէ՝ յաիտեան պիտի չծարաւնայ»: (Յովհաննէս 4.13)
- † «Ծշմարիտ երկրապագուները հոգիով եւ ճշմարտութեամբ պիտի պաշտեն Հայրը»: (Յովհաննէս 4.23)
- † «Ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզ-

մաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին»: (Յովհաննէս 5.28-29)

† «Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէք ապահովել այն կերակուրը որ յաիտենական կեանքի մէջ կը մնայ»: (Յովհաննէս 6.27)

† «Ես եմ կեանքի հացը. ան որ ինծի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ եւ ան որ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չծաւանայ»: (Յովհաննէս 6.35)

† «Ինծի եկողը պիտի չմերժեմ» (Յովհաննէս 6.37)

† «Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»: (Յովհաննէս 7.24)

† «Ես եմ աշխարհի լոյսը. ով որ ինծի կը հետեւի՝ խաւարի մէջ պիտի չքայլէ, այլ կեանքի առաջնորդող լոյսը պիտի ունենայ»: (Յովհաննէս 8.12)

† «Ով որ մեղք կը գործէ՝ ծառայ է մեղքին»: (Յովհաննէս 8.34)

† «Ով որ իմ խօսքերս գործադրէ՝ յաիտեան պիտի չմեռնի»: (Յովհաննէս 8.51)

† «Ես եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի»: (Յովհաննէս 11.25-26)

† «Եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես»: (Յովհաննէս 11.40)

† «Չեմ եկած աշխարհը դատապարտելու, այլ աշխարհը փրկելու»: (Յովհաննէս 12.47)

† «Նոր պատուիրան մը կու տամ ձեզի.— Սիրեցէ՛ք զիրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ զիրար սիրեցէք: Ձեր իրար

սիրելովն է որ մարդիկ պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք»: (Յովհաննէս 13.34-35)

† «Ինչ որ իմ անունովս խնդրէք՝ պիտի կատարեմ զայն»: (Յովհաննէս 14.13)

† «Ով որ կը սիրէ զիս՝ խօսքերս կը գործադրէ»: (Յովհաննէս 14.23)

† «Ինչ որ Հօրմէս խնդրէք իմ անունովս՝ պիտի տայ ձեզի»: (Յովհաննէս 16.23)

† «Երանի՜ անոնց որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան»: (Յովհաննէս 20.29)

† Ով որ անոր հաւատայ՝ կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն: (Գործք Առաքելոց 13.39)

† Բազմաթիւ նեղութիւններ պէտք է կրենք՝ Աստուծոյ արքայութիւնը մտնելու համար: (Գործք Առաքելոց 14.21)

† «Աւելի երջանկաբեր է տալը քան առնելը»: (Գործք Առաքելոց 20.35)

† Աստուած մեզի հանդէպ իր սէրը յայտնեց անով՝ որ երբ տակաւին մեր մեղքերուն մէջ էինք՝ Քրիստոս մեզի համար մեռաւ: (Հռովմայեցոց 5.8)

† Մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաիտենական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: (Հռովմայեցոց 6.23)

† Ներկայ ժամանակի չարչարանքները ոչինչ են զալիք փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի: (Հռովմայեցոց 8.18)

† Գիտենք, թէ Աստուած բարիին համար գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն զինք: (Հռովմայեցոց 8.28)

† Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ: (Հռովմայեցոց 8.31)

- † Եթէ բերնովդ խոստովանիս թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց, կը փրկուիս: (Հոովմայեցոց 10.9)
- † Յարգելու մէջ զիրար գերազանցեցէք: (Հոովմայեցոց 12.10)
- † Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք: (Հոովմայեցոց 12.18)
- † Մի՛ պարտուիր չարէն, այլ բարիով յաղթէ չարին: (Հոովմայեցոց 12.21)
- † Կ'ուզե՛ս իշխանութենէն չվահնալ. բարիք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես: (Հոովմայեցոց 13.3)
- † Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն՝ Սուրբ Հոգիէն տրուած: (Հոովմայեցոց 14.17)
- † Խաչելութեան մասին խօսիլը յիմարութիւն կը թուի կորսւողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան դիմողներու համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա: (Ա. Կորնթացոց 1.18)
- † Չէ՛ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ հոգին կը բնակի ձեր մէջ: (Ա. Կորնթացոց 3.16)
- † Այս աշխարհի իմաստութիւնը Աստուծոյ աչքին յիմարութիւն է: (Ա. Կորնթացոց 3.19)
- † Իւրաքանչիւրը թող ապրի Աստուծոյ իրեն տրուած շնորհքին համաձայն: (Ա. Կորնթացոց 7.17)
- † Գիտութիւնը կը հպարտացնէ, մինչ սէրը հաւատքը կ'ամրապնդէ: (Ա. Կորնթացոց 8.1)
- † Ով որ անարժանութեամբ ուտէ այս հացէն կամ խմէ Տիրոջ քաժակէն, Տիրոջ մարմինն եւ արեան դէմ մեղանշած կ'ըլլայ: (Ա. Կորնթացոց 11.27)

- † Միասնաբար կը կազմէք Քրիստոսի մարմինը: (Ա. Կորնթացոց 12.27)
- † Զգուեցէք հասնիլ այն շնորհքներուն, որոնք լաւագոյնն են: (Ա. Կորնթացոց 12.31)
- † Սէր ունեցողը համբերատար կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Սէր ունեցողը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: (Ա. Կորնթացոց 13.4-6)
- † Ինչ որ եմ՝ Աստուծոյ շնորհքին կը պարտիմ: (Ա. Կորնթացոց 15.10)
- † Եթէ միայն ա՛յս կեանքին համար յոյս դրած ենք Քրիստոսի վրայ, մարդոց մէջ ամենէն խղճալիներն ենք: (Ա. Կորնթացոց 15.19)
- † Քրիստոս արդարեւ մեռելներէն յարութիւն առած է, որպէս առաջին օրինակ մեռելներու յարութեան: (Ա. Կորնթացոց 15.20)
- † Արթո՛ւն եղէք, հաստատուն մնացէք ձեր հաւատքին վրայ. քա՛ջ եղէք, զօրացէք: (Ա. Կորնթացոց 16.13)
- † Ինչ որ կ'ընէք՝ սիրով ըրէք: (Ա. Կորնթացոց 16.14)
- † Փրկուողներուն մէջ ապրինք թէ կորսուողներուն, մեր կեանքերը Քրիստոսի ձեռքով Աստուծոյ ընծայուած անուշահոտ խունկի պէս իրենց բոյրը կը տարածեն: (Բ. Կորնթացոց 2.15)
- † Ծարունակ Քրիստոսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք, որպէսզի անոր կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի: (Բ. Կորնթացոց 4.10)
- † Գիտենք թէ հողեղէն այս տունը, որ մեր մարմինն է եւ որուն մէջ կը բնակինք, պիտի քայքայուի. քայց երկինքի մէջ

- ունինք Աստուծոյ կողմէ պատրաստուած անձեռագործ եւ յաիտեմական մարմին մը՝ իբրեւ տուն: (Բ. Կորնթացւոց 5.1)
- † Ուեւ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ այն ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ: (Բ. Կորնթացւոց 5.17)
- † Հիմա՛ է յարմար ժամանակը. հիմա՛ է փրկութեան օրը: (Բ. Կորնթացւոց 6.2)
- † Հեռո՛ւ մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով: (Բ. Կորնթացւոց 7.1)
- † Աստուած երբեմն մեզ կը ցաւցնէ՝ ապաշխարութեան միջոցաւ փրկութեան առաջնորդելու նպատակով: (Բ. Կորնթացւոց 7.10)
- † Յիշեցէք, թէ ով որ քիչ կը սերմանէ՝ քիչ ալ պիտի հնձէ. եւ ով որ առատօրէն կը սերմանէ՝ առատօրէն ալ կը հնձէ: (Բ. Կորնթացւոց 9.6)
- † Աստուած զուարթառատ կերպով նուիրողը կը սիրէ: (Բ. Կորնթացւոց 9.7)
- † Ով որ կը պարծենայ՝ Տիրոջմով թող պարծենայ: (Բ. Կորնթացւոց 10.17)
- † Իսկական ընտրուածը ան չէ որ ինքզինք կը գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի: (Բ. Կորնթացւոց 10.18)
- † Հնձեցէք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: (Բ. Կորնթացւոց 13.5)
- † Աստուծոյ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ միայն կրնանք անոր համար աշխատիլ: (Բ. Կորնթացւոց 13.8)
- † Եթէ մարդիկը սիրաշահելու ետեւէ ըլլալի՝ Քրիստոսի ծառայ ըլլալէ կը դադրէի: (Գաղատացւոց 1.10)

- † Աստուած մարդոց միջեւ խտրութիւն չի դնէր: (Գաղատացւոց 2.6)
- † Անգամ մը որ Քրիստոսի միանալով մկրտուեցաք, այլեւս Քրիստոս է որ կ'ապրի ձեր մէջ: (Գաղատացւոց 3.27)
- † Աստուած ձեզ կանչեց որ ազատ ըլլաք. միայն նաչեցէք որ այդ ազատութիւնը մարդկային ցանկութիւններ կատարելու պատրուակ չդառնայ, այլ սիրով ծառայեցէք իրարու: (Գաղատացւոց 5.13)
- † Սուրբ Հոգիին արդիւնքներն են՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն: (Գաղատացւոց 5.22-23)
- † Իրարու բեռը վերցուցէք, եւ այդպիսով կատարեցէք Քրիստոսի սիրոյ օրէնքը: (Գաղատացւոց 6.2)
- † Ամէն մէկը թող իր գործը կշռէ եւ իր գոհունակութիւնը միայն ինքն իրեն պահէ, փոխանակ ինքզինք ուրիշներուն հետ բաղդատելու: (Գաղատացւոց 6.4)
- † Մարդ ինչ որ ցանէ՝ ա՛յն կը հնձէ: (Գաղատացւոց 6.8)
- † Չձանձրանանք բարիք գործելէ: (Գաղատացւոց 6.9)
- † Որքան ատեն որ ժամանակը մեր ձեռքն է՝ բարիք ընենք բոլորին, մանաւանդ հաւատքի ճամբով մեր հարազատներուն: (Գաղատացւոց 6.10)
- † Բաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: (Գաղատացւոց 6.14)
- † Մի՞նչ մենք մեր մեղքերուն պատճառով հոգեւորապէս մեռած էինք, Աստուած, որ առատ է իր ողորմութեամբ, մեզի հանդէպ ունեցած մեծ սիրոյն համար մեզ վերստին կեանքի կոչեց Քրիստոսով: (Եփեսացւոց 2.4-5)
- † Աստուծոյ շնորհքովը փրկուեցաք, քանի հաւատացիք: (Եփեսացւոց 2.8)

- † Մեզմէ իրաքանչիւրին շնորհք մը տրուած է, Քրիստոսի պարգեւած չափով: (Եփեսացոց 4.7)
- † Նոյնիսկ երբ բարկանաք՝ չըլլա՛յ որ մեղանչէք. եւ բարկացած չմնաք մինչեւ իրիկուն: (Եփեսացոց 4.26)
- † Աստուծոյ նմանեցէք, որպէս իր սիրելի որդիները: (Եփեսացոց 5.1)
- † Լոյսի որդիներուն վայել ձեռով ապրեցէք: (Եփեսացոց 5.8)
- † Ամէն բանի համար շնորհակալութիւն յայտնեցէք Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով: (Եփեսացոց 5.20)
- † Զաւակներ, իբրեւ Տիրոջ հետեւորդներ՝ ձեր պարտականութիւնն է հնազանդիլ ձեր ծնողներուն, որովհետեւ ա՛յդ է շիտակը: (Եփեսացոց 6.1)
- † Իրաքանչիւր մարդ իր ըրած բարիքին փոխարէնը Տիրոջմէ պիտի ստանայ: (Եփեսացոց 6.8)
- † Նայեցէք որ Քրիստոսի Աւետարանին վայել ձեռով ապրիք: (Փիլիպպեցոց 1.27)
- † Միայն դուք ձեզ մի՛ մտածէք, այլ նաեւ ձեր ընկերոջ մասին: (Փիլիպպեցոց 2.4)
- † Միշտ ուրա՛խ եղէք Աստուծոյմով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրա՛խ եղէք: (Փիլիպպեցոց 4.4)
- † Բանի ընդունեցիք Քրիստոս Յիսուսը, Տէրը, կապուած մնացէք իրեն: Իր մէջ արմատացէք եւ իր վրայ անեցէք՝ ամրապնդուելով այն հաւատքին մէջ որ ստրվեցաք, եւ անդադար գոհութիւն յայտնեցէք իրեն: (Կողոսացիս 2.6-7)
- † Զեր բերնէն ռեւէ հայհոյութիւն կամ լկտի խօսք չլսուի: (Կողոսացիս 3.8)
- † Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նո՛ր մարդ

- եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի գԱստուած ճանչնաք: (Կողոսացիս 3.9-10)
- † Իրարու հանդէպ հանդուրժող եղէք, եւ ներեցէք իրարու՝ երբ մէկդ միւսին դէմ տրտունջ մը ունենաք: (Կողոսացիս 3.13)
- † Ինչ որ ալ ընէք՝ արտա՛նց ըրէք, այնպէս ինչպէս պիտի ընէիք Տիրոջ, եւ ո՛չ մարդոց: (Կողոսացիս 3.23)
- † Զեզմէ իրաքանչիւրը թող սրբութեամբ եւ պատուով ամուսնանայ: (Ա. Թեսաղոնիկեցոց 4.3)
- † Պատրա՛ստ ըլլանք, հաւատքի եւ սիրոյ գրահը հագած, եւ փրկութեան յոյսի սաղաւարտը դրած մեր գլխուն: (Ա. Թեսաղոնիկեցոց 5.8)
- † Նայեցէք որ ռեւէ մէկը չարիք ընողին չարիք չհատուցանէ. այլ ջանացէք միշտ բարիք ընել՝ ըլլա՛յ իրարու, ըլլա՛յ բոլորին: (Ա. Թեսաղոնիկեցոց 5.15)
- † Ամէն բան քննեցէք՝ բարիին կառչեցէք: (Ա. Թեսաղոնիկեցոց 5.21)
- † Հաստատուն մնացէք, եւ ամո՛ւր պահեցէք աւանդութիւնները որ ստրվեցաք: (Բ. Թեսաղոնիկեցոց 2.14)
- † Բարիք գործելէ մի՛ ձանձրանաք: (Բ. Թեսաղոնիկեցոց 3.13)
- † Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու համար. եւ առաջին մեղաւորը ես եմ: (Ա. Տիմոթէոսի 1.15)
- † Աստուծոյ բոլոր ստեղծածները բարի են եւ անոնց մէջ խոտելի բան չկայ, մանաւանդ զանոնք շնորհակալութեամբ ընդունողին համար: (Ա. Տիմոթէոսի 4.4)
- † Եթէ մարմնի մարգանքները որոշ բաներու օգտակար են, աստուածապաշտութիւնը ամէ՛ն բանի օգտակար է: (Ա. Տիմոթէոսի 4.8)

† Մէկը որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքին անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ անելի գէշ՝ քան անհաւատ մը: (Ա. Տիմոթէոսի 5.8)

† Բոլոր չարիքներու արմատը դրամասիրութիւնն է: (Ա. Տիմոթէոսի 6.10)

† Իբրեւ Քրիստոս Յիսուսի հաւատարիմ մէկ զինուորը, պատրաստ եղիր իրեն պէս չարչարուելու: (Բ. Տիմոթէոսի 2.3)

† Աշխատէ որ Աստուծոյ աչքին ըլլաս այնպիսի մշակ մը, որ իր գործերուն համար ամենալիք բան մը չունի: (Բ. Տիմոթէոսի 2.15)

† Փախի՛ր երիտասարդական ցանկութիւններէն: Արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ու սրբութեան հետամուտ եղիր: (Բ. Տիմոթէոսի 2.22)

† Բոլոր անոնք որոնք կ'ուզեն աստուածապաշտութեամբ Քրիստոս Յիսուսի միացած ապրիլ, անպայման հալածանքներու պիտի ենթարկուին: (Բ. Տիմոթէոսի 3.12)

† Հաստատ կեցիր քու սորված բաներուդ վրայ, որոնց ճշմարտութեան վստահ ես: (Բ. Տիմոթէոսի 3.14)

† Սուրբ Գիրքերը զօրութիւնը ունին քու միտքդ իմաստութեան բանալու, որպէսզի Քրիստոս Յիսուսի հաւատաս եւ փրկուիս: (Բ. Տիմոթէոսի 3.15)

† Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ Գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար: (Բ. Տիմոթէոսի 3.16)

† Աստուած իր շնորհքը յայտնեց, որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: (Տիտոս 2.11)

† Ծշմարտութենէն հեռացած ռեւէ մէկը մէկ կամ երկու անգամ խրատելէ ետք երբ տեսնես որ անօգուտ է՝ կապերդ խզէ՛ անոր հետ: (Տիտոս 3.10)

† Աստուծոյ Խօսքը կենդանի է եւ ազդու, անելի՛ հատու քան ռեւէ երկասլորի սուր, եւ կը թափանցէ մարդոս շունչին ու հոգիին մէջ, մինչեւ ողն ու ծուծը, եւ կը քննէ մտածումներն ու սրտին խորհուրդները: (Եբրայեցոց 4.12)

† Այսուհետեւ համարձակօրէն մօտենանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային: (Եբրայեցոց 4.16)

† Մարդիկ մէկ անգամ կը մեռնին եւ անկէ ետք Աստուծոյ դատաստանին կը յանձնուին: (Եբրայեցոց 9.27)

† Առանց հաւատքի անկարելի է Աստուծոյ հաճութիւնը շահիլ: (Եբրայեցոց 11.6)

† Անտուած մեզ կը խրատէ մե՛ր բարիքին համար, որպէսզի հաղորդակից դառնանք իր սրբութեան: (Եբրայեցոց 12.10)

† Զանազէք բոլորին հետ խաղաղ ապրիլ եւ վարել սուրբ կեանք մը, առանց որուն ռեւէ մէկը Տէրը պիտի չտեսնէ: (Եբրայեցոց 12.14)

† Երախտապարտ ըլլանք, որ Աստուած անասանելի թագաւորութիւն մը կու տայ մեզի: Եւ այդ երախտագիտութեամբ ալ ծառայենք Աստուծոյ, այնպէս՝ ինչպէս հաճելի է իրեն, յարգանքով ու պատկառանքով: (Եբրայեցոց 12.28)

† Մտիկ ըրէք ձեր առաջնորդներուն խօսքը, որովհետեւ անոնք անքուն կը հսկեն ձեր հոգիներուն համար: (Եբրայեցոց 13.17)

† Անելի պատրաստակամ եղէք լսելու քան խօսելու: (Յակոբոսի 1.19)

- † Զեզմէ թօթափեցէ՛ք ամէն աղտոտ սովորութիւն ու չար ցանկութիւն, եւ խոնարհութեամբ ընդունեցէ՛ք ձեր մէջ սերմանում Աստուծոյ Խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել: (Յակոբոսի 1.21)
- † Ով որ ինքզինքը բարեպաշտ կը սեպէ եւ սակայն իր լեզուին սանձ չի դնէր, անիկա ինքզինք կը խաբէ: (Յակոբոսի 1.26)
- † Հօր Աստուծոյ համար անկեղծ եւ իսկական բարեպաշտութիւնը՝ կարօտութեան մէջ եղող որբերուն եւ այրիներուն այցելու եւ օգնական ըլլալն է, եւ աշխարհի մէջ ապրելով հանդերձ՝ ինքզինք անարատ պահելը: (Յակոբոսի 1.27)
- † Ինչպէս մարմինը առանց հոգիի մեռած է, այնպէս ալ հաւատքը առանց գործերու մեռած է (Յակոբոսի 2.26)
- † Ան որ գիտէ իր խօսքերը կշռել՝ կատարեալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող: (Յակոբոսի 3.2)
- † Դուք ձեզ խոնարհեցուցէ՛ք Տիրոջ առջեւ, եւ ի՛նք ձեզ պիտի բարձրացնէ: (Յակոբոսի 4.10)
- † Ով որ շիտակը գիտէ եւ չ'ընէր՝ մեղք է որ կը գործէ: (Յակոբոսի 4.17)
- † Արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ: (Յակոբոսի 5.16)
- † Թող ձեր խղճմտանքը մաքուր ըլլայ, որպէսզի ամօթով մնան անոնք՝ որ ձեր մասին կը չարախօսեն, ձեր քրիստոնէական բարի կենցաղը բամբասելով: (Ա. Պետրոսի 3.16)
- † Ամէն բանի վախճանը մօտեցեր է. հետեւաբար զգաստ եւ արթուն եղէք, աղօթքի նուիրուելու համար: (Ա. Պետրոսի 4.7)
- † Աստուծոյ հօգօր ձեռքին տակ խոնարհեցէ՛ք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: (Ա. Պետրոսի 5.7)

- † Տէրը գիտէ աստուածապաշտները փրկել իրենց փորձութիւններէն: (Բ. Պետրոսի 2.9)
- † Եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք թէ Աստուած որ արդար է՝ պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն: (Ա. Յովհաննոս 1.9)
- † Իր եղբայրը սիրողը լոյսին մէջ կը մնայ եւ զայթակողութեան պատճառ չի դառնար: (Ա. Յովհաննոս 2.10)
- † Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ Օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին Օրէնքին խախտումն է: (Ա. Յովհաննոս 3.4)
- † Ով որ իր եղբայրը չի սիրէր՝ մահուան ենթակայ կը մնայ: (Ա. Յովհաննոս 3.14)
- † Աստուած սէր է: (Ա. Յովհաննոս 4.16)
- † Այն մարդը որ կ'ըսէ «Ես կը սիրեմ զԱստուած», բայց իր եղբայրը կ'ատէ, ստախօս մըն է: (Ա. Յովհաննոս 4.20)
- † Համարձակ կերպով դիմենք Աստուծոյ, այն վստահութեամբ որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ: (Ա. Յովհաննոս 5.14)
- † «Հաւատարիմ եղիր ինծի՝ նոյնիսկ եթէ մեռնիլ պէտք է, եւ ես քեզի կեանքի պսակը պիտի տամ»: (Յայտնութիւն 2.10)
- † «Ահա շուտով կու գամ . ամո՛ւր պահէ ինչ որ ունիս, որպէսզի ռեւէ մէկը յաղթանակի պսակը ձեռքէդ չառնէ»: (Յայտնութիւն 3.10)
- † Երանի՛ այն մեռելներուն, որոնք այժմէն սկսեալ կը ննջեն՝ Տիրոջ հնազանդ ըլլալով: (Յայտնութիւն 14.13)
- † Երանելի են բոլոր անոնք, որոնք Գառնուկին հարսանեկան ընթրիքին հրաշիրում են: (Յայտնութիւն 19.9)
- † Երկինքէն ձայն մը լսեցի, որ կ'ըսէր. «Ահաւասիկ Աստուծոյ բնակութիւնը մարդոց միջեւ է. Աստուած անոնց հետ պիտի

բնակի, անոնք իր ժողովուրդը պիտի ըլլան եւ ինք՝ անոնց
Աստուածը: Անոնց աչքերէն ամէն արցունք պիտի սրբէ.
այլեւս ո՛չ մահ գոյութիւն պիտի ունենայ, ո՛չ սուգ, ո՛չ լաց,
ո՛չ ցաւ եւ ո՛չ ալ յոգնութիւն: (Յայտնութիւն 21.3-4)



ԱՂՕԹՔՆԵՐ ԵՒ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:
Հայր մեր որ յերկինս ես.
սո՛ւրբ եղիցի անուն քո:
Եկեսցէ արքայութիւն քո.
եղիցին կամք քո
որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր:
Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք թողումք
մերոց պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն.
այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:
Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս. ամէն:

Օրհնեալ է մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ամէն:
Հայր մեր երկնաւոր,
սրբաբանուի՛ անունըդ.
թող գա՛յ արքայութիւնըդ,
թող կատարուի՛ քո կամքըդ,
ինչպէս որ երկիցի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ:
Ամենօրեայ մեր հացը այսօ՛ր եւս մեզի տուր:
Ներէ՛ մեր յանցանքները,
ինչպէս որ մեզ կը ներեմք անոնց՝ որոնք

մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն:
Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեամբ մէջ իյնանք.
այլ մեզ չարէն ազատէ:
Որովհետեւ քո՛ւկդ եմ միշտ՝
արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ՝
յարարիչն երկնի եւ երկրի,
երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս
Որդին Աստուծոյ՝
ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին՝
այսինքն յէութենէ Հօր:
Աստուած յԱստուծոյ,
լոյս ի լուսոյ,
Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ,
ծնունդ, եւ ո՛չ արարած:
Նոյն ինքն ի բնութենէ Հօր,
որով ամենայն ինչ եղեւ
յերկինս եւ ի վերայ երկրի,
երեւելիք եւ աներեւոյթք:
Որ յաղագս մեր մարդկան
եւ վասն մերոյ փրկութեան
իջեալ ի յերկնից՝
մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն
Հոգւովն Սրբով:
Որով հառ զմարմին, զհոգի եւ զմիտ,
եւ զամենայն որ ինչ է ի մարդ,
ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք:
Չարչարեալ, խաչեալ, թաղեալ,

յերրորդ աւուր յարուցեալ,
ելեալ ի յերկինս նովին մարմնովն
նստաւ ընդ աջմէ Հօր:
Գալոց է
նովին մարմնովն եւ փառօք Հօր
ի դատել զկենդանիս եւ զմեռեալս,
որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն
որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարդարէս
եւ յաւետարանս:
Որ էջն ի Յորդանան,
քարոզեաց յառաքեալսն,
եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն, ընդհանրական
եւ առաքելական սուրբ եկեղեցի,
ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն,
ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց,
ի յարութիւն մեռելոց,
ի դատաստանն յաւիտենից Հոգւոց եւ մարմնոց,
յարքայութիւնն երկնից
եւ ի կեանսն յաւիտենականս:

ՀԱՒԱՏՔԻ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամենակալ Հօր,
որ արարիչն է երկինքին ու երկրին,
երեւելի եւ աներեւոյթ ստեղծութեան:

[Կը հաւատանք] մէկ Տէր Յիսուս Քրիստոսի,
Աստուծոյ Որդիին,
որ Հօր Աստուծմէ ծնած է որպէս միակ ծնունդ,
այսինքն՝ Հօրը եութեանէ:

Աստուած է՝ Աստուծմէ [ծնած],
լոյս է՝ լոյսէն [յառաջ եկած].
նշմարիտ Աստուծմէ ծնած նշմարիտ Աստուած է,
եւ ո՛չ արարած:

Ինք եւ Հայրը նոյն բնութիւնը ունին:

Իրմով ստեղծուեցաւ ամէն ինչ որ կայ

երկինքի մէջ թէ երկրի վրայ,

երեւելի թէ աներեւոյթ:

Ինքն էր, որ մեզի՝ մարդերուս

եւ մեր փրկութեան համար

երկինքէն իջաւ

եւ մարմին առնելով մարդ եղաւ,

Սուրբ Հոգիի ներգործութեամբ

սուրբ Կոյս Մարիամէն ծնելով

որպէս կատարեալ մարդ,

մարմինով, հոգիով եւ միտքով,

եւ ամէն ինչով որ մարդկային է.

ո՛չ թէ երեւութապէս, այլ նշմարտապէս:

Զարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ,

երրորդ օրը յարութիւն առաւ.

նոյն մարմինով երկինք ելաւ

եւ Հօր աջ կողմը նստաւ:

Այլեւ վերստին պիտի գայ,

նոյն մարմինով եւ Հօրը փառքով,

ողջերն ու մեռածները դատելու,

եւ անվախեան պիտի ըլլայ իր թագաւորութիւնը:

Կը հաւատանք անեղ եւ կատարեալ Սուրբ Հոգիին,

որ խօսեցաւ Օրէնքին, մարգարէներուն

եւ Աւետարաններուն ընդմէջէն.

որ Յորդանան [գետին] վրայ յայտնուեցաւ,

առաքեալներուն ուսուցանեց

եւ սուրբերուն մէջ բնակեցաւ:

Կը հաւատանք նաեւ մէկ, ընդհանրական

եւ առաքելական սուրբ Եկեղեցիի.

մէկ մկրտութեան, ապաշխարութեան,

մեղքերու քաւութեան եւ թողութեան.

մեռելներու յարութեան,

հոգիներու եւ մարմիններու վերջին դատաստանին,

երկինքի արքայութեան

եւ յաւիտեանական կեանքին:

ՊԱՀՊԱՆԵԱ՝ ԶՄԵԶ

(Աստուծոյ պահպանութիւնը խնդրելու համար)

*Պահպանեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ
հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի քո ի խաղաղու-
թեան. փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն:
Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ
ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:*

Պահպանէ՛ մեզ, Քրիստոս Աստուած մեր, սուրբ եւ
պատուական խաչիդ հովանիին տակ, խաղաղութեան մէջ.
փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիէն. ար-
ժանի՛ ըրէ գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօրը եւ Սուրբ
Հոգիին հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

ԱՌԱՋՆՈՐԴ ԿԵՆԱՑ

(Ճամբորդութեան)

*Առաջնորդ կենաց եւ պարգեւիչ խաղաղութեան,
Քրիստոս Աստուած մեր, առաջնորդեա՛ մեզ գնալ ի ճա-
նապարհս քո արդարութեան, եւ խաղաղութեամբ ժա-
մանել ի նաւահանգիստն կենաց եւ փրկութեան՝ շնոր-*

հօք ողորմութեան քո. զի դո՛ւ ես օգնական եւ փրկիչ մեր,
եւ քե՛զ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Կեանքի առաջնորդ եւ խաղաղութիւն պարգեւող,
Քրիստոս Աստուած մեր, առաջնորդէ՛ մեզ, որպէսզի
ընթանամք քո արդարութեան ցամաքներու մէջ, եւ
խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան ցաւա-
հանգիստը, քո ողորմութեան շնորհիւ. որովհետեւ
դո՛ւն ես մեր օգնականը եւ փրկիչը, եւ քեզի՛ կը վա-
յելէ փառք եւ իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ ՆԱՐԵԿԷՆ

(Ողորմութիւն եւ ներում խնդրելու)

Ո՛վ անքնին բարձրեալ, հոգիներու բարի պետ,
խաղաղութեան առաջնորդ, եւ անոխակալութեան սահ-
ման, ի բարին յիշէ նաեւ մեր մարդկային թշնամի-
ները եւ ողորմութիւն ու քաւութիւն շնորհէ անոնց: Իմ
պատճառովս մի՛ բարկանար անոնց, Տէր, եւ ներէ՛ իրենց
յանցանքները, որոնք թերեւս իրաւունքով ալ յանցաւոր
են մեզի հանդէպ: Ու մինչ ես Քեզմէ բարիք կը խնդրեմ
զիս ատողներուն համար, Դուն ալ, քու մեծագործու-
թեանդ համեմատ, անճառելի բարիքներ հրաշագործէ:
Զիս թշնամանողները մի՛ ոչնչացնէր, այլ բարեփոխէ՛: Իմ
եւ անոնց մէջ ալ բարիք սերմանէ: Քու ձեռքովդ կը բաշ-
խուին ամենուն կեանքին անհրաժեշտ պէտքերը, եւ Քեզի
փա՛ռք կը վայելէ մինչեւ յաւիտեան. ամէն:

Նարեկ, ԶԳ.

ԳՈՀԱՄԱՆՔ ԶՔԷՆ

(Առաւօտեան շնորհակալութեան աղօթք)

Գոհանամք զքէն, Տէր Աստուած մեր, որ երեւելի լու-
սով քով զուարճացուցեր զամենայն արարածս քո. իսկ
իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեւեան լուսա-
ւորեցեր զհաւատացեալս ի քեզ: Զօրացո՛ւ եւ զմեզ, Տէր,
ի պահպանութիւն պատուիրանաց քոց՝ ի տուրջեանս
յայսմիկ եւ յամենայն ժամանակի: Որպէս զի լուսաւորեալ
մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք, եւ հանդերձեալ բար-
եացդ հասցուք ընդ ամենայն սուրբքս քո: Շնորհօք եւ
մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ եւ փրկչիդ Յիսուսի
Քրիստոսի, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պա-
տիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շնորհակալ եմք քեզմէ, ո՛վ մեր Տէր Աստուածը, որ
քու տեսանելի լոյսովդ ուրախացուցիր քո բոլոր արարած-
ներդ, իսկ քու պատուիրաններուդ հոգեւոր լոյսովը
լուսաւորեցիր քո բոլոր քեզի հաւատացողներս: Մե՛զ ալ
գօրացուր, Տէր, քու պատուերներդ պահելու այսօր եւ
ամէն ժամանակ, որպէսզի լուսաւորուած միտքով միշտ
քու կամքդ կատարեմք, եւ գալիք բարիքներուդ հաս-
նինք քու բոլոր սուրբերուդ հետ, շնորհիւր եւ մարդա-
սիրութեամբ մեր Տիրոջ եւ փրկչին՝ Յիսուս Քրիս-
տոսի, որո՛ւն կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պա-
տիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՈՎ ԲԱՐԵՐԱՐ ՀԱՅՐ ԵՐԿՆԱԼՈՐ

(Աստուծմէ շնորհք խնդրելու աղօթք)

Ո՛վ բարերար Հայր երկնաւոր,
Դարձեալ առջիդ կու գամ այսօր,
Տալու Քեզի փառք, գոհութիւն,

Որ կեանքերնիս պահեցիր Դուռն:
 Օգնէ՛ որ միշտ ըլլամ բարի,
 Ընկեր չըլլամ բնաւ չարի:
 Նման մանուկ փոքր Յիսուսին՝
 Ջարգանայ իմ սիրտն ու հոգին:
 Իմ սիրելեաց տուր օրհնութիւն,
 Խրնամէ՛ մեզ սիրովդ անհուն:
 Այս աղօթքըս թող Քեզ հասնի՝
 Սուրբ անունով Տէր Յիսուսի:
 Ամէն:

ԱՂՕԹՔ ՕԳՈՍՏԻՆՈՍԷՆ (Բարեգործութեան աղօթք)

Ո՛վ Տէր, Դուռն որ հարուստ ըլլալով մեզի համար
 աղքատացար, ու յայտնեցիր թէ ամենայետին եղբայր-
 ներուդ մատուցուած բարիք մը Քեզի՛ ընծայուած կ'ըլ-
 լայ, շնորհէ՛ մեզի որ միշտ սիրայօժար ծառայենք մեր
 նմաններուն, եւ մեզի շնորհած կարողութիւններուդ
 չափովը թագաւորութեանդ օրհնութիւնները տարածենք
 բոլոր երկրի վրայ, Քու փառքիդ համար. ամէն:

ԱՂՕԹՔ Ս. ԲԱՐՍԵՂԷՆ (Օգտակար դառնալու խնդրանք)

Սորվեցո՛ւր մեզի, ո՛վ Տէր, տեսնել եւ օգտագոր-
 ծել ծառայութեան ամէն պատեհութիւն: Թող ըլլանք
 տուողներ՝ առանց փոխարժէքը հաշուելու, պայքարող-
 ներ՝ առանց վիրաւորելու, աշխատողներ՝ առանց հան-
 գիստ փնտռելու, ծառայողներ՝ առանց վարձատրու-
 թիւն ակնկալելու, այն գիտակցութեամբ թէ Քու կա՛մքդ
 է որ կը կատարենք. ամէն:

ՈՎ ՀԱՅՐ, ՕՐՀՆԷ ՄԵՐ ՍԵՂԱՆ (Սեղանի օրհնութիւն)

Ո՛վ Հայր, օրհնէ՛ մեր սեղան,
 Թող բարիքներդ հոն տեղան:
 Տուր մեզ գոհ սիրտ մանաւանդ,
 Որ միշտ փա՛ոք տանք սուրբ անուանդ: Ամէն:

ՀԱԽԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ (Օրումն իւրաքանչիւր ժամուն յատուկ աղօթք)

Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ Քեզ,
 Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնու-
 թիւն, արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն
 եղելոց. ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամե-
 ղիս:

Հաւատով կը խոստովանիմ եւ կ'երկրպագեմ Քեզի՝
 Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնու-
 թիւն, արարիչը հրեշտակներուն, մարդոց եւ բոլոր
 արարածներուն. ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինձի՝
 բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ Քեզ,
 անբաժանելի՛ լոյս, միասնական Սուրբ երրորդութիւն եւ
 մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ խա-
 ւարի, հալածեա՛ ի հոգւոյ իմմէ՛ զխաւար մեղաց եւ ան-
 գիտութեան, եւ լուսաւորեա՛ զմիտս իմ՝ ի ժամուս
 յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն
 զխնդրուածս իմ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝
 բազմամեղիս:

Հաւատով կը խոստովանիմ եւ կ'երկրպագեմ Քեզի,
 անբաժանելի՛ լոյս, միասնական Սուրբ երրորդութիւն եւ

մէկ Աստուածութիւն, արարիչ լոյսի եւ հալածող խաւարի, հալածէ՛ իմ հոգիէս մեղքի եւ անգիտութեան խաւարը, եւ լուսաւորէ՛ միտքս, որ այս պահուս Քեզի հաճելի ձեւով աղօթեմ եւ Քեզմէ ընդունիմ իմ խնդրանքներս. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո՛ւ ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ Քու սիրելի Որդիդ զրկեցիր մոլորեալ ոչխարը փնտռելու համար. մեղանչեցի երկինքի դէմ՝ Քու առջեւդ. ընդունէ՛ զիս իբրեւ անառակ որդին եւ հագուեցո՛ւր ինծի առաջին պատմումանը, զոր վրայէս հանեցի մեղքերուս պատճառաւ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, եւ առեր մարմին ի Սրբոյ Կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց, եւ համբարձար փառօք առ Հայր. մեղայ յերկինս եւ առաջի քո. յիշեա՛ զիս որպէս զաւազակն՝ յորժամ զաս արքայութեամբ քով. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ հայրական ծոցէն խոնարհեցար եւ մարմին առիր Սուրբ Կոյս Մարիամէն՝ մեր փրկութեան համար. խաչուեցար, թաղուեցար, յարութիւն առիր մեռելներէն, եւ փառքով համբարձար՝ Հօրը քով. մեղանչեցի երկինքի դէմ՝ Քու առջեւդ. երբ Քու

թագաւորութեամբըդ գաս, յիշէ՛ զիս, ինչպէս աւագակը ընդունեցիր. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի վերնատունն, եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւագանին. մեղայ յերկինս եւ առաջի քո. մաքրեա՛ զիս վերստին աստուածային հրով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ Յորդանան [գետին վրայ] եւ վերնատունը իջար, եւ զիս լուսաւորեցիր Սուրբ Աւագանին մկրտութեամբ. մեղանչեցի երկինքի դէմ՝ Քու առջեւդ. վերստին մաքրէ զիս Քու աստուածային կրակովդ, ինչպէս հրեղէն լեզուներով մաքրեցիր սուրբ առաքեալները. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քոյ սրբոյ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Անեղ բնութիւն, մեղանչեցի Քեզի դէմ՝ մտքովս, հոգւովս եւ մարմնովս. մի՛ յիշեր իմ առաջուան մեղքերս՝ Քու սուրբ անունիդ համար. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Տեսող ամենայնի, մեղայ Քեզ խորհրդով, բանիւ եւ գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, եւ գրեալ զանուն իմ ի դպրութեան կենաց. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ամենատես [Աստուած], մեղանչեցի Քեզի դէմ՝

խորհուրդով, խօսքով եւ գործով. ջնջէ՛ իմ յանցանքներու մութիակը եւ կենաց Գիրքին մէջ գրէ անունս. եւ ողորմէ՛ Բու արարածներուդ եւ ինծի՛ բազմամեղիս:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. թողութի՛ւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւագանին մինչեւ ցայսօր մեղուցեալ իմ առաջի Աստուածութեանդ քո զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Գաղտնիքները քննող [Աստուած], մեղք գործեցի Քեզի դէմ՝ կամայ եւ ակամայ, գիտակցաբար եւ անգիտակցաբար. թողութի՛ւն շնորհէ մեղաւորիս, որովհետեւ Սուրբ Աւագանէն ծնելէս մինչեւ այսօր մեղք գործած եմ Բու Աստուածութեանդ առջեւ՝ իմ զգայարանքներովս եւ մարմնիս բոլոր անդամներով. եւ ողորմէ՛ Բու արարածներուդ եւ ինծի՛ բազմամեղիս:

Ամենախնամ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց գերկիւղ քու սուրբ՝ ո՛չ եւս հայել յայրատ, եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժեւ լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զչարժումն սոցա՝ լինել միշտ ըստ պատուիրանաց քոց, յամենայնի. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Բոլորը խնամող Տէր, Բու սուրբ երկիւղդ պահապան դիր աչքերուս՝ որ այլեւս անառակ ու ցանկացող աչքով չնայիմ, եւ ականջներուս՝ որ ախորժ չգգամ չար խօսքեր լսել, եւ բերանիս՝ որ ստութիւն չխօսիմ, եւ սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ, եւ ձեռքերուս որ անիրաւութիւն

չգործեմ, եւ ոտքերուս որ անօրէնութեան նամբաներէն չբալեմ. այլ ուղղէ՛ ասունց շարժումը, որպէս զի միշտ քու պատուիրաններուդ համաձայն ըլլան՝ ամէն բանի մէջ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինծի՛ բազմամեղիս:

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գիտութեան քո՝ ի սրտի իմում. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դուն՝ կենդանի կրա՛կ, Քրիստոս, իմ սրտիս մէջ բորբոքէ Բու սիրոյդ կրակը, որ այս աշխարհը ձգեցիր, որպէսզի այրէ հոգիիս աղտերը, սրբէ խղմտանքս եւ մաքրէ մարմնիս մեղքերը, եւ սրտիս մէջ վառէ Բու գիտութեանդ լոյսը. եւ ողորմէ՛ Բու արարածներուդ եւ ինծի՛ բազմամեղիս:

Իմաստութիւն Հօր՝ Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դուն՝ Հօրը իմաստութիւնը, Յիսուս, իմաստութի՛ւն տուր ինծի՛ որ բարի բաներ խորհիմ, խօսիմ եւ գործեմ Բու առջեւդ՝ ամէն ժամ. չար խորհուրդներէ, խօսքերէ եւ գործերէ փրկէ՛ զիս. եւ ողորմէ՛ Բու արարածներուդ եւ ինծի՛ բազմամեղիս:

Կամեցող բարեաց, Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ՝ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Բարի՛ք կամեցող, կամֆերը կատարող Տէր, մի՛ քողուր որ ես իմ կամֆիս համաձայն ընթանամ, այլ առաջնորդէ՛ զիս՝ որ միշտ Քու բարեսէր կամֆիդ համաձայն ֆալեմ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՛՝ բազմամեղիս:

Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց, եւ զօրացո՛ր զսիրտ իմ՝ ատել զմեղս եւ սիրել զքե՛զ միայն, եւ առնել զկամս քո. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Երկնաւոր Թագաւոր, տո՛ւր ինծի Քու արքայութիւնդ՝ զոր Քեզ սիրողներուն խոստացար. եւ զօրացո՛ւր իմ սիրտս՝ որպէսզի մեղքը ատեմ եւ միայն Քե՛զ սիրեմ եւ Քու կամֆդ կատարեմ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՛՝ բազմամեղիս:

Խնամող արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի եւ զմարմին իմ՝ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց, եւ ի մարդոց անիրաւաց, եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Արարածները խնամող [Տէր], Քու խաչիդ նշանովը հեռո՛ւ պահէ հոգիս եւ մարմինս՝ մեղքի խաբկանքներէն, դեւերու փորձութիւններէն, անիրաւ մարդերէն եւ հոգիի ու մարմնի ամէն տեսակի վտանգներէն. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՛՝ բազմամեղիս:

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի՛ լիցի ի վերայ իմ՝ ի տուէ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբեք սասանեցայց. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դուն՝ որ բոլորին պահապանն ես, Քրիստոս, Քու աջդ

թող հովանի՛ ըլլայ իմ վրաս՝ գիշեր ու ցերեկ, տան մէջ նստած ատենս թէ նամբան գացած ատենս, ֆնացած թէ արթնցած ատենս, որպէսզի երբե՛ք չսասանիմ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՛՝ բազմամեղիս:

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. Քե՛զ յանձն առնեմ զանձն իմ. դո՛ւ հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Աստուած իմ, որ ձեռքդ կը բանաս եւ բոլոր արարածներդ կը լիացնես Քու ողորմութեամբդ. ինքզինքս Քեզի՛ կը յանձնեմ. Դո՛ւն հոգա եւ պատրաստէ հոգիիս եւ մարմնիս բոլոր պէտքերը, այսօրուրէն մինչեւ յաւիտեան. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՛՝ բազմամեղիս:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ր զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, եւ բեւեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գեհենոյն, եւ զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Մոլորեալները ետ դարձնող [Տէր], դարձո՛ւր զիս իմ չար սովորութիւններէս դէպի բարի սովորութիւն, եւ իմ հոգիիս մէջ բեւեռէ մահուան սոսկալի օրը, դժոխքի սարսափը եւ արքայութեան սէրը, որպէսզի զղջամ իմ մեղքերուս համար եւ արդարութիւն գործեմ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՛՝ բազմամեղիս:

Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ր ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնըկին, զի

լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զեղանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ամմահութեան աղբիւր, ապաշխարութեան արցունքն՝ քո հոսեցուր սրտէս՝ ինչպէս պողոնիկին [սրտէն հոսեցուցիր], որպէսզի այս աշխարհէն դեռ չելած՝ իմ մեղքերս լուամ. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ զալ առ Քեզ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ողորմութիւն պարգեւող [Տէր], շնորհե՛ ինձի՝ որ ուղղափառ հաւատով, բարի գործերով եւ Սուրբ Մարմինդ եւ Արիւնդ մաշակած գամ քովդ. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որք են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Բարերար Տէր, բարի հրեշտակի՛ մը յանձնել զիս, որպէսզի հեգութեամբ անոր աւանդեմ հոգիս եւ անխռով անցնիմ երկնքի տակ գտնուող չար դեւերուն ընդմէջէն. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց. ի կոչման աւուրն, եւ հանգչել յուսով բարեաց յօթեալսն արդա-

րոց մինչեւ յօր մեծի գալստեան քո. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դու՛ն՝ ճշմարիտ լոյս, Քրիստոս, շնորհե՛ հոգիս՝ որ կանչուելու օրը ուրախութեամբ տեսնել քու փառքիդ լոյսը, եւ արդարներու օթեւանին մէջ բարիքներու յոյսովը հանգչի՝ մինչեւ քու մեծ գալստեանդ օրը. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

Դատաւոր արդար, յորժամ դաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա՛ զիս ի յաւիտեանական հրոյն, եւ լսելի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Արդար Դատաւոր, երբ Հօրդ փառքով գաս՝ ողջերն ու մեռելները դատելու, դատաստանի մի՛ մտներ քու ծառայիդ հետ, այլ փրկե՛ զիս յաւիտեանական կրակէն, եւ երկնքի արքայութեանդ մէջ ինձի լսել տուր արդարներուն ուղղուած երանաւէտ կոչը. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

Ամենողորմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա՛ եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց՝ զթողութիւն որ առ իս յանցանացն, եւ դարձո՛ զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ամենողորմ Տէր, ողորմե՛ բոլոր Քեզի հաւատացողներուն, ազգակիցներուն եւ օտարներուն, ծանօթներուն եւ անծանօթներուն, ողջերուն եւ մեռելներուն. թողութի՛ւն շնորհե՛ նաեւ թշնամիներուն եւ զիս ատող-

ներու ինծի դէմ ունեցած իրենց յանցանքներուն համար, եւ դարձո՛ւր զանոնք իմ մասիս իրենց խորհած չարիքնե-
րէն, որպէսզի Քու ողորմութեանդ արժանի ըլլան. եւ
ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

*Փառաւորեալ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո, եւ
կատարեալ ի բարի՝ զխնդրուածս իմ, բարեխօսութեամբ
Սրբուհոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ
սրբոյն Ստեփանոսի Նախավկային, եւ Սրբոյն Գրիգորի
մերոյ Լուսաւորչին, եւ սրբոց առաքելոց, մարգարէից,
վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւո-
րաց, կուսանաց, միանձանց եւ ամենայն սրբոց քոց երկ-
նաւորաց եւ երկրաւորաց: Եւ քեզ փա՛ռք եւ երկրպագու-
թիւն՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս
յաւիտենից. ամէն:*

Փառաւորեալ Տէր, ընդունէ՛ Քու ծառայիդ աղա-
չանքը, եւ դէպի բարիք կատարէ իմ խնդրուածքս, բա-
րեխօսութեամբը Սրբուհի Աստուածածնին եւ Յովհան-
նէս Մկրտչին, եւ Սուրբ Ստեփանոս Նախավկային եւ մեր
Լուսաւորչին՝ Սուրբ Գրիգորի, եւ սուրբ առաքելանե-
րուն, մարգարէներուն, վարդապետներուն, մարտիրոս-
ներուն, հայրապետներուն, ճգնաւորներուն, կոյսերուն,
մեմակեացներուն, եւ երկիմֆի մէջ թէ երկրի վրայ
գտնուող Քու բոլոր սուրբերուդ: Եւ Քեզի՝ անբաժանելի
Սուրբ Երրորդութեանդ՝ փա՛ռք եւ երկրպագութիւն յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

ՃԱՇԱԿԵՍՑՈՒՔ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ

(Ճաշէն առաջ)

*Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս որ
պատրաստեալ է մեզ ի Տեառնէ. օրհնեա՛լ է Տէր ի պարգեւս
իւր. ամէն:*

Խաղաղութեամբ մաշակենք այս կերակուրը, որ Տիրոջ
կողմէ պատրաստուած է մեզի համար. օրհնեա՛լ է Տէրը իր
պարգեւներուն մէջ. ամէն:

ԶԼԻՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՑ

(Ճաշերէ ետք)

*Զլիութիւն ի վերայ սեղանոյս անհատ եւ աննուազ
արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց եւ
լիացոյց. նմա փա՛ռք յաւիտեանս, ամէն:*

Սեղանիս լիութիւնը թող անսպառ եւ անպակաս ընէ
Քրիստոս, մեր Աստուածը, որ մեզ կերակրեց եւ լիացուց.
փա՛ռք անոր յաւիտեանս. ամէն:

ՏԷՐ ԻՄ ԱՍՏՈՒԱԾ

(Քննալի առաջ)

*Տէր իմ Աստուած, Տէր բարերար,
Դո՛ւն պահպանէ զիս այս դիշեր.
Տո՛ւր հօրս եւ մօրս կեանք երկար
եւ երջանիկ հանգիստ օրեր:*

*Քու սուրբ հրեշտակըդ մեր մօտէն
Զըհեռանա՛յ ամենեւին,
Այլ պահէ միշտ փորձանքներէն,
Արթնցընէ զուարթագին:
Ամէն:*

ԶԳՈՐԾՍ ԶԵՌԱՑ ՄԵՐՈՑ

(Գործի սկսելէ առաջ)

*Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա ի մեզ, Տէ՛ր,
եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ:*

Մեր գործերը դո՛ւն ուղղէ, Տէ՛ր,
Մեր գործերը յաջողէ՛:

ԶԲԱՐՁՐԵԱԼՆ ԶՔՐԻՍՏՈՍ
(Զարէ գերծ մնալու մաղթանք)

*Զբարձրեալն զՔրիստոս արասցուք մեզ ապաւէն, զի
ո՛չ հասցեն առ մեզ չարք, եւ տանջանք մի՛ մերձեցին ի
յարկս մեր:*

Բարձրեալ Քրիստոսը մեզի ապաւէն ընենք, որպէսզի
ոեւէ չարիք չհասնի՝ մեզի, եւ ոեւէ փորձանք չմօտենա՛յ
մեր յարկերուն:

ԽԱԶ ՔՈ ԵՂԻՑԻ
(Խաչին ապաւէնը խնդրելու մաղթանք)

*Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տէ՛ր Յիսուս, յորժամ
երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս: Յայնժամ մեք
մի՛ ամաչեսցուք, յուսացեալքս ի քեզ. այլ զօրութեամբ
քով մեծաւ՝ բերկրեսցուք ընդ աջմէ՛ քումմէ՛, որպէս
զորդիս լուսոյ եւ որդիս տուրնջեան:*

Քու խաչդ մեզի ապաւէն ըլլայ, Տէ՛ր Յիսուս, երբ
երեւիս հօրը փառով՝ լուսաւոր ամպերու մէջ. այն ատեն
չամչնա՛նք մեմք՝ Քեզի յուսացողներս, այլ քու մեծ
զօրութեամբդ բերկրինք քու աջ կողմդ, իբրեւ լոյսի
որդիներ եւ փրկուածներ:

ՏԵՐ, ՈՒՂՂԵԱ՛ ԶԳՆԱՑՍ ՄԵՐ
(Ճամբորդութենէ առաջ)

Տէր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղա-

*ղութեան. Տէր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հոգւոց մերոց
եւ ամենայն հաւատացելոց, զնալ յարդարութեան ճա-
նապարհն եւ ի կեանսն յաւիտենից:*

Տէր, ուղղէ՛ մեր ընթացքը խաղաղութեան ճամբա-
ներուն մէջ. Տէր, ուղղէ եւ առաջնորդէ՛ մեր եւ բոլոր
հաւատացեալներուն հոգիները, որպէսզի արդարութեան
ճամբուն մէջ եւ դէպի յաւիտենական կեանքը փախնք:

ՏԵՐ, ՄԻ՛ ԴԱՐՁՈՒՑԱՆԵՐ ԶԵՐԵՍՍ ՔՈ
(Աստուծմ օգնութիւն խնդրելու մաղթանք)

*Տէր, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինչն. Տէր բա-
րերար, աղաչեմ զքեզ, օգնակա՛ն իմ լեր: Տէ՛ր, մի՛
անարգեր զիս եւ մի՛ թողուր զիս, Աստուած՝ Փրկիչ իմ:*

Տէր, Քու երեսդ մի՛ դարձներ ինձմէ. բարերար Տէր,
կ'աղաչեմ Քեզի, ինձի օգնակա՛ն եղիր: Տէ՛ր, մի՛ անարգեր
զիս, եւ մի՛ թողուր զիս, ո՛վ իմ փրկիչ Աստուածս:

ԼՈՒՍՈՎԴ ՔՈ, ՔՐԻՍՏՈՍ
(Խաղաղութիւն եւ ողորմութիւն խնդրելու մաղթանք)

*Լուսովդ քո, Քրիստոս, ամենեքեան լուսաւորե-
ցաք, եւ ի սուրբ խաչ քո, փրկիչ, հաւատացեալքս ապա-
ւինեցաք: Լո՛ւր մեզ, Աստուած փրկիչ մեր. տո՛ւր մեզ
զխաղաղութիւն քո, եւ արա՛ առ մեզ զողորմութիւն քո,
մարդասէր Տէր:*

Քու լոյսովդ, Քրիստոս, ամէնքս լուսաւորուե-
ցանք, եւ հաւատացեալներս, Փրկիչ, քու սուրբ Խաչիդ
ապաւինեցանք: Լսէ՛ մեզի, Աստուած, մեր փրկիչը, քու
խաղաղութիւնդ տուր մեզի, եւ քու ողորմութիւնդ շնորհէ
մեզի, մարդասէր Տէր:

ԱՆԿԱՆԻՄՔ ԱՌԱՋԻ ՔՈ
(Բարեխօսութեան խնդրանք Ս. Կոյսին)

Անկանիմք առաջի քո, Սուրբ Աստուածածին, եւ աղաչեմք զանարատ զԿոյսդ. բարեխօսեա՛ վասն անձանց մերոց, եւ աղաչեա՛ զՄիածին Որդիդ՝ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Կը խոնարհիմք քու առջեւդ, Սուրբ Աստուածածին, եւ կ'աղաչեմք քեզի, ո՛վ անարատ Կոյս. բարեխօսե՛ մեր անձերուն համար, եւ խնդրե՛ քու Միածին Որդիդ, որ մեզ ազատէ փորձութիւններէն եւ մեր բոլոր նեղութիւններէն:

ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄՈՒ
(Մեղքերէ սրբուելու խնդրանք)

Յամենայն ժամու աղաչանք իմ ա՛յս են. — ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս, Տէ՛ր, եւ յօտարէն պահեա՛ զծառայս քո, մարդասէր Տէր:

Ա՛յս է իմ ամէն ժամու աղաչանքս. — իմ մեղքերէս սրբե՛ զիս, Տէ՛ր, եւ թշնամիէն պահե՛ զիս՝ Քու ծառայ, մարդասէր Տէր:

ՔՐԻՍՏՈՍ ԻՄ ԱՍՏՈՒԱԾՍ Է
(Չանագան առիթներու մաղթանքներ)

ԴԿ. Քրիստոս է իմ Աստուած, եւ փառաւոր առնեմ զսա. Աստուած հօր իմոյ, եւ բա՛րձր արարից զսա:

ԱԶ. Տուք փառս Աստուծոյ, տուք օրհնութիւն մարդասիրին թագաւորին յաւիտենից, որ փրկէ զծառայս իւր եւ կեցուցանէ:

ԱԿ. Դո՛ւ ես Տէր մեր, դո՛ւ ես Քրիստոս փրկիչ մեր, զքե՛զ օրհնեն անձինք մեր:

ԲԶ. Բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ. հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր՝ տերամք եւ հաւատով:

ԲԿ. Խաղաղութեանց տուող Քրիստոս, զխաղաղութիւն եւ զերկնային ողորմութիւն քո պարգեւեա յարարածս քո:

ԳԶ. Յոյս կենդանութեան, յոյս եւ ապաւէն փրկութեան, Տէր Յիսուս փրկիչ. փրկեա՛ եւ փարատեցո՛ զցաւս անձին իմոյ:

ԴԿ. Քրիստոս իմ Աստուածս է, կը փառաւորեմ զայն. իմ հօրս Աստուածն է, պիտի գովեմ զայն:

ԱԶ. Փա՛նք տուէ՛ք Աստուծոյ. օրհնեցէ՛ք մարդասէր եւ յաւիտեական թագաւորը, որ կը փրկէ իր ծառաները եւ կ'ապրեցնէ:

ԱԿ. Դո՛ւն ես մեր Տէրը, Դո՛ւն ես մեր փրկիչը, Քրիստոս, մեր հոգիները կ'օրհնե՛նք քեզ:

ԲԶ. Իմ գօրութիւնս բարձրացաւ շնորհիւ իմ փրկիչ Աստուծոյս, իմ սիրտս հաւատով հաստատուեցաւ շնորհիւ Տիրոջ:

ԲԿ. Խաղաղութիւն տուող Քրիստոս, Քու խաղաղութիւնդ եւ երկնային ողորմութիւնդ պարգեւէ քու արարածներուդ:

ԳԶ. Կեանքի յոյս, փրկութեան յոյս եւ ապաւէն, Տէր Յիսուս Փրկիչ, փրկէ զիս եւ փարատէ՛ իմ ցաւերս:



ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1. ԱԿ. դրձ.— Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ

Որք զարդարեցին տընօրինաբար զիմաստն անեղին,
հաստատելով յերկրի ըզգիր կենդանի՝
հովուել ըզհօտ Նոր Իսրայելի.
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որք զերկրաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին,
ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝
անճառ բանին արժանի եղեն.
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որք զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի,
հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի՝
թարգմանութեամբ նշանագրութեան.
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

2. ԴԶ.— Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ

Որ ըզշնորհս աստուածային
առ ի վերուստ իջեալ յերկնից
պարգեւեցեր հիւսիսականացս
ի ձեռնն սուրբ վարդապետին.
աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած:

Որ զանմարմին պարունակող բանի՝
զգրաւորական զիմաստ Հոգւոյն

շնորհեցեր որդւոց Թորգոմայ,
յայտնեալ տեսեամբ ի ձեռնն սուրբ վարդապետին.
աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած:

Որ զգիտութիւն քո զերկնային
եւ զհոգեւոր զիմաստութիւն
առատապէս ծաւալեցեր յեկեղեցիս Հայաստանեայց
ի ձեռնն սրբոց թարգմանչաց.
աղաչանօք սոցա ողորմեա՛ մեզ, Աստուած:

3. ԱԿ.— Ս. ԱՌԱՔԵԼՈՑ

Աշակերտոք Քրիստոսի,
եւ առ ամենայն տիեզերս առաքեալք.
բարեխօսեցէ՛ք առ Տէր վասըն մեր:

Որք առիք ըզպատուէր
քարոզել աներկիւղ ըզբանքն կենաց յաշխարհի.
բարեխօսեցէ՛ք առ Տէր վասըն մեր:

Որք արժանի եղէք
տեսանել մարմնով զՈրդին Աստուծոյ յայտնապէս.
բարեխօսեցէ՛ք առ Տէր վասըն մեր:

4. ԴԶ.— Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող,
որ յառաջ գիտութեամբ
ըզփրկութիւն Հայաստանեայց ըսկըզբնաւորեալ,
ի պարթեական մեղապարտ ազգէն
լուսաւորի՛չ մեզ շնորհեցեր.
վասն որոյ բարեխօսութեամբ սորա, Փրկիչ,
կեցո՛ ըզմեզ այժմ եւ ի քո յաճաւոր գալըստեանն:

Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ Գրիգոր
զանտանելի ըզչարչարանս ի յանձն էառ.
եւ երիւք հընգօք ամօք ի մէջ թունաւորացըն բնակէր:

անդրնդային տանջանքն ի վիրապին.
վասն որոյ բարեխօսութեամբ սորա, Փըրկիչ,
կեցո՛ր ըզմեզ այժմ եւ ի քո յահաւոր գալըստեանն:

Հրաշագործ քո բանիդ եւ մեծ ողորմութեամբ,
ելեալ բըծըշկէր
ըզհարուածեալսն ի դիաբաղիս սաստիցն,
երկրպագուս առնելով զամենեսեան
սուրբ Երրորդութեանդ.
վասն որոյ բարեխօսութեամբ սորա, Փըրկիչ,
կեցո՛ր ըզմեզ այժմ եւ ի քո յահաւոր գալըստեանն:

5. ԴԶ.— ԽԱԶՎԵՐԱՑԻ Բ. ՕՐՈՒԱՆ

Զօրութիւն սուրբ խաչի քո, Քրիստոս,
որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի.
սա պահեցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

Քանզի ի սմա բարձրացար, Աստուած,
եւ ի սմա հեղեր ըզպատուական սուրբ զարինդ.
սա պահեցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

Եւ ըզքո միսանգամ ըզգալուստդ
նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի.
սա պահեցէ ըզմեզ յամենայն փորձութենէ:

ՆՈՅՆՄԲԵՐ

6. ԱԿ. դրձ.— Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾՆՆԴԵԱՆ

Ո՛վ գերահրաշ ծաղիկ, բուրեալ յեղեմայ.
հոտ անմահութեան ծնընդոցս Եւայի,
յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս.
օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

Դու լուծիչ երկանց, բարձող անիծից.
ծագումն արեւու լուսոյն ճըշմարտի,
որով հերքեաւ խաւարն առաջին.
օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

Ըզքե՛զ ունիմըք բարեխօս, կո՛յս անհարսնացեալ.
մայր անարատ՝ Էմմանուէլի,
տաճար Բանին Հօրն երկնաւորի.
օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

7. ԴԿ.— Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾՆՆԴԵԱՆ

Նահապետացն Աբրահամու Իսահակայ եւ Յակոբայ
պարգեւեցար ի յԱստուծոյ, կոյս Մարիամ,
դուստրը նոցին.

երանեն ազգ եւ ազինք այսօր զծնեալդ ի յԱննայէ:

Աղախին եւ մայր կենաց աջոյն ծընող Հօր միածնին,
որ առ ի քէն մարմնովն
ընկէց զամբարտաւանըն յաթոռոյ.
երանեն ազգ եւ ազինք այսօր զծնեալդ ի յԱննայէ:

Որ բարձրացոյց զանկեալ բնութիւնս
ի քէն ծնընդեամբ Որդին յերկինս.
ըզկարօտեալսն ելից հացի եւ զմեծատունն ելոյծ ունայն.
երանեն ազգ եւ ազինք այսօր զծնեալդ ի յԱննայէ:

8. ԴԶ. դրձ.— Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾՆՆԴԵԱՆ

Նոր Սիովն ծընեալ մանկունք սուրբ աւագանան,
շնորհազարդեալք Հոգւովն Աստուծոյ.
օրհնեցէ՛ք զՀայրն երկնաւոր.
յաւուր ծնընդեան սրբութիւնոյ կուսին,
յոր օրհնեցաւք յանիծից նախնոյն:

Արեամբ Գառնն անարատի փըրկեալ ժողովուրդք,
յաւուր ծնընդեան մօր անտանելոյն՝

գովեցէ՛ք ըզՄիածինն
որ հաճեցաւ առնուլ մարմին անսերմն ի նմանէ,
յոր օրհնեցայք յանիծից նախնոյն:

Յառատաբուղի շնորհաց Հոգւոյն
լուսազարդեալ ազգք հեթանոսաց,
յաւոր ծնընդեան մօր՝ Բանին ծնողի՝
զփառակից Որդոյ զՀոգին
բարեբանեցէ՛ք հոգեւոր երգով,
որ մաքրազարդեաց զմարմնարան Որդւոյն:

9. ԴԿ.— ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Բ. ՕՐՈՒԱՆ

Աստուածածին, ամպ լուսաւոր,
որ ըզգօղըն կենաց հեղեր յերկիր բանաւոր.
եւ զնախամօրըն շիջուցեր պարտեացն ըզհուր.
անդադար ձայնի զքեզ բարեբանեմք,
եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Տեղի անտանելի Բանին,
եւ երկիր վայրափակ յորում լոյսն ազանիցի.
եւ արեւելք Արեգականն արդարութեան.
անդադար ձայնի զքեզ բարեբանեմք,
եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Զքեզ, կատարումըն մարգարէից՝
կուսական քո ծնընդեամբ
որով բնութեանքս քակտեցան օրէնք,
հրաքուն սեռիցն փոխադրեալ ի լուսաճեմ խորանսն.
անդադար ձայնի զքեզ բարեբանեմք,
եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

10. ԴԶ.— ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Այսօր ժողովեալ սրբբոցն ի միասին,

երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն,
ջահագգեստութ պայծառացեալք՝
լուցանէին ըզլապտերս իրեանց.
եւ միաձայնեալ ասէին,
օրհնեա՛լ ես, ամէնօրհնեա՛լդ ի կանայս:

Այսօր դնելով ըզսուրբ կոյսն առ դրանըն գերեզմանին,
սպասէին եւ ակն ունէին Տեառն իսկ ինքնին գոլով,
գեր ի վերոյ տեսեալ զարարիչն
եկեալ բազում հրեշտակօք.
եւ նոցա միաձայնեալ ասէին,
օրհնեա՛լ ես, ամէնօրհնեա՛լդ ի կանայս:

Այսօր տեսեալ ըզսուրբ կոյսըն թոռուցեալ յօդս,
եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս,
մըտանելով յերկնային խորանսն
ընդ իմաստուն կուսանսն.
եւ նոցա միաձայնեալ ասէին,
օրհնեա՛լ ես, ամէնօրհնեա՛լդ ի կանայս:

11. ԴԿ.— ԽԱԶՎԵՐԱՑԻ Է. ՕՐՈՒԱՆ

Խաչի քո, Քրիստոս, երկըրպագեն արարածք ամենայն,
որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ.
սա եղիցի մեզ պահապան յաղթող,
ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանասրկոյին:

Ի սմա բարձրացար, բարձո՛ղդ անիծից,
որ փառաւորեալդ ես ընդ Հօր,
ժողովել ըզհեռացեալսըն կենսաբեր փայտին.
ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանասրկոյին:

Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն.
սմա՛ սպասէին արգելեալքն ի մեղսատի բանտին.
որ ազատեաց ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

12. ԴԿ. — Ս. ԾՆՆԴԵԱՆ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի
որ յայսմ ատոր յայտնեցաւ.
հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
տան անտիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ
ի Բեթղեհէմ քաղաքի.
որդիք մարդկան, օրհնեցէ՛ք,
զի վասըն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի
ի խանձարուրս պատեցաւ,
ոչ մեկնելով ի Հօրէ՛
ի սուրբ այրին բազմեցաւ:

13. ՏԱՂ Ս. ԾՆՆԴԵԱՆ

Այսօր տօն է սուրբ ծննդեան, անտի՛ւ.
Տեառն մերոյ եւ յայտնութեան, անտի՛ւ:
Այսօր Արեւն արդարութեան, անտի՛ւ.
Երեւեցաւ ի մէջ մարդկան, անտի՛ւ:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Այսօր սուրբ կոյսն անապական, անտի՛ւ.
Ծնաւ երեք զանմահ Արքայն, անտի՛ւ:
Այսօր հրեշտակք յերկնից իջեալ, անտի՛ւ.
Ընդ մեզ օրհնեն զանմահ Արքայն, անտի՛ւ:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

14. ԳԶ. — ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ

Զանճաւելի լուսոյ մայր

եւ ըզբնակարան անըսկըզբնակից Որդոյն,
օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զանհաս տնօրէնութեան մայր
եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին,
օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զբոլորից փրկութեան մայր,
որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ.
ըզնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք:

15. ԱՌԱԽՕՏՈՒ ԵՐԳ

Առաւօտ լուսոյ՝
Արեգակն արդար,
առ ի լո՛յս ծագեաւ:
Բրդիսումն ի Հօրէ,
բրդխեա՛ ի հոգոյս
բան՝ քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
զանձիդ ծածկելոյ
զըտո՛ղ զիս արա:
Դուռն ողորմութեան
դաւանողիս բա՛ց,
դասեցո՛ վերնոցն:

Երբեակ միութիւն,
եղելոց խնամող,
եւ ի՛նձ ողորմեա:
Զարթի՛ր, Տէր, յօգնել.
զարթո՛ ըզթմրեալս՝
զուարթնոց նըմանիլ:

Սէ՛ր անուն Յիսուս,
սիրով քով ճմլեա՛
սիրտ իմ քարեղէն:

Վասն գթութեան,
վասն ողորմութեան
վերստի՛ն կեցո:

Փըրկիչ բոլորից,
փութա՛ զիս փըրկել
փորձութեանց մեղաց:
Քաիչ յանցանաց,
քաւեա՛ զօրհնաբանս՝
քեզ երգել ըզփառս:

16. ԳԶ. — Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՑԻԻ

Հայրապետ սուրբ եւ անբիծ
եւ ընտրեալ յորովայնէ.
սքանչելագործ վրկայ
եւ պարծանք ազգի մարդկան.
առ Քրիստոս բարեխօսեա՛
վասըն մեր, քո տօնողացս:

Հովիւ հոգեւոր բանաւորի հօտի.
լուսաւորիչ տիեզերաց,
սիւն լուսոյ կանգնեալ ի մէջ եկեղեցոյ.
առ Քրիստոս բարեխօսեա՛
վասըն մեր, քո տօնողացս:

Հաստատութիւն հաւատոյ
պըսակ ի գլուխ եկեղեցոյ.
պայծառ քարոզ տիեզերաց
եւ պարծանք ազգի մարդկան.
առ Քրիստոս բարեխօսեա՛
վասըն մեր, քո տօնողացս:

ՅՈՒՆՈՒԱՐ

17. ՏԱՂ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ.
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:

Կամէր մըկըրտիլ ի ծառայէն իւրմէ.
չառնոյր Կարապետն ըզմըկըրտելն ի յանձն:

Գե՛տ, մի՛ զարհուրիր, քո Արարիչն եմ ես.
եկեալ մըկրտիմ եւ լըւանամ ըզմեղս:

Այսօր ձայնըն հայրական,
յերկնից իջեալ հաճոյական.
սիրեցելոյ Որդոյ վկայ,
այ, յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան:
Յորդորական ձայնի երգեր
մեծ կարապետըն Յովհաննէս:

Այսօր Սուրբ Հոգին իջեալ,
աղանակերպ եւ նիւթեղէն.
հրեղէն լեզուօք յայտնեալ ի քեզ,
այ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան:
Յորդորական ձայնի երգեր
մեծ կարապետըն Յովհաննէս:

18. ԴԿ. — Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագեալ,
պայծառացուցեր սուրբ գեկեղեցի
հեղմամբ արեան սրբոցն.
մաղթանօք սոցա խընայեա՛ ի մեզ,
պարգեւատո՛ւ բարեաց,
եւ ողորմեա՛ քո արարածոց:

Պանծալի սուրբ զաւակօք հովիւքըն զըւարթունք,
հրով Հոգւոյն շիջուցին ըզբոցն
ըզկրակապաշտ պարսիցն.
մաղթանօք սոցա խընայեա՛ ի մեզ,
պարգեւատո՛ւ բարեաց,
եւ ողորմեա՛ քո արարածոց:

Պարթեական տեսանողին յառաջագոյն ազդեցութեամբ
զհաւատոյ որդիս սրբոյն Գրիգորի
պըսակազարդ տեսեալ.
մաղթանօք սոցա խընայեա՛ ի մեզ,
պարգեւատո՛ւ բարեաց,
եւ ողորմեա՛ քո արարածոց:

19. ԴԿ. դրձ.— Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ

Նորահրա՛շ պըսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց,
վառեցար զհնու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու.
Վարդա՛ն, քաջ մահատակ, որ վանեցեր ըզթշմամին,
վարդագոյն արեամբըդ քո պըսակեցեր զեկեղեցի:

Երկնաւո՛ր թագաւորին զհնու յաղթեալ պատերազմին,
խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս.
Խորե՛ն, խորհըրդական եւ ծանուցեալ անուն բարի,
խաշելոյն վըկայ եղեալ՝ հեղմամբ արեան պըսակեցաւ:

Երկոքո՛ւմքք հարազատօք ընտրելագոյն մահատակօք,
յառաջեալ յամենեցունց գլուխ եւ աւարտ մարտիրոսաց.
Մախաշափղ գոլով բարեաց յառաջադէմըն Գարեգին,
ընկալեալ ըզբրաբիոնըն յաղթական մահատակացն:

ՓԵՏՐՈՒԱՐ — ՄԱՐՏ

20. ԵՐԳ ԱՐԵՒԱԳԱԼԻ

Յարեւելից մինչ ի մոտս, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ,

ամենայն ազգ եւ ազինք,
յօրհնութիւն նոր օրհնեցէք զԱրարիչն արարածոց,
որ ծագեաց ըզլոյս արեգականն այսօր յաշխարհս:

Եկեղեցիք արդարոց,
փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեանն,
յառաւօտըս լուսոյ՝ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս
գովեցէք ընդ Հօր եւ Հոգւոյն,
որ ծագեաց ըզլոյս գիտութեան իւրոյ ի մեզ:

21. ԵՐԳ ԱՐԵՒԱԳԱԼԻ

Լո՛յս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս.
բնակեալդ ի լոյս անմատոյց, Հայր երկնաւոր,
ի դասուց լուսեղինացն օրհնեալ.
ի ծագել լուսոյ առաւօտուս,
ծագեա՛ ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի:

Լո՛յս, ի լուսոյ ծագումն, Արեգակն արդար.
անճառ ծնունդ Հօր Որդի,
յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ Հօր.
ի ծագել լուսոյ առաւօտուս,
ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լո՛յս, ի Հօրէ բղխումն, աղբիւր բարութեան,
Հոգիդ սուրբ Աստուծոյ,
մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանն.
ի ծագել լուսոյ առաւօտուս,
ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լո՛յս, երբեակ եւ մի,
անբաժանելի սուրբ Երրորդութիւն.
զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք.
ի ծագել լուսոյ առաւօտուս,
ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

22. ԲԶ. — ԵՐԳ ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

Նայեա՛ց սիրով, Հայրըդ գթած,
ի քո ստեղծեալ գործըս ձեռաց,
եւ ըզբանակըս հրեշտակաց
տո՛ւր պահապան մեզ՝ տրկարաց.
փրկեա՛ զանձինս ի փորձանաց,
ի խաւարի շրջող դիւաց.
զի ի տուրնջեան եւ գիշերի
տացուք քեզ փառս անլուելի:

Էին անեղ անըսկզբան
ծընունդ անճառ Որդի եւ Բան,
որ արարեր ըզտիւ գործոյ
եւ ըզգիշեր ի հանգիստ քնոյ.
տո՛ւր ի նընջել աչաց մարմնոյ՝
արթո՛ւն լինել մեզ ըստ հոգւոյ.
զի ի տուրնջեան եւ գիշերի
տացուք քեզ փառս անլուելի:

Գոչման փողոյն Գաբրիէլի
որ ի վերջնումըն գիշերի,
լսել արա զմեզ արժանի
եւ աջակողմն օղեաց դասի,
անշէշ վառեալ լոյս լապտերաց՝
ըստ իմաստուն հինգ կուսանաց.
զի ընդ Փեսայիդ ի յառագաստ
հարսունք հոգով մըրցուք ի փառս:

23. ԲԶ. — ՄԵԾ ՊԱՀՔԻ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԿԻՐԱԿԻ

Որ ըզխորհուրդ քո գալըստեանդ յառաջագոյն՝ գուշակեցեր,
մարգարէիւքն Իսրայէլի գորս ընտրեցեր յետ Մովսէսի.
որք խօսեցան Հոգով սրբով, բազմապատիկ օրինակօք.
տո՛ւր մեզ, փրկկի՛շ, ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն:

Ի մերձեմալ ամաց վերջին, զոր տեսանողքըն ծանուցին,
ըզհասանել մեր փրկողիդ առ ի վախճան ժամանակին,
երեւեցար ի մէջ մարդկան՝ զգեցեալ ըզկերպ ծառայական.
տո՛ւր մեզ, փրկկի՛շ, ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն:
ցԱստըւած քո, Սիր՛վն:

Ի վեցերորդ աւուր զԱդամ ստեղծեր ի տիպ քո տիրական,
որ ոչ պահեալ ըզպատուիրանըն՝ մերկացաւ ըզպատմոճան.
խսկ նոր Ադամդ ի վեց դարուն ա՛յց արարեր կորուսելոյն.
տո՛ւր մեզ, փրկկի՛շ, ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն:

24. ԱԶ. — ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Հա՛յր բազումողորմ,
խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին.
թո՛ղ ինձ ըզմեղս իմ, եւ ողորմեա՛:

Տէ՛ր, որ զըթացար
ի կինըն քանանացի,
զըթա՛ եւ յիս՝ ի մեղաւորս, եւ ողորմեա՛:

Տէ՛ր, որ դարձուցեր
ըզմաքսաւորն ի գիտութիւն ճըշմարտութեան,
դարձո՛ եւ զիս՝ ըզմոլորեալս, եւ ողորմեա՛:

25. ԱԿ. — ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:
Մըրըրկեալ ալիք թըշնամին ինձ յարուցանէ:
Նաւապե՛տ բարի, լե՛ր անձին իմոյ ապաւէն:

Մերձ եմ լընկըղմիւ, օգնեա՛ ինձ,
նաւապե՛տ բարի.
քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինըք մեղաց:

Աստուա՛ծ, յօգնե՛լ ինձ փութա,
քանզի խորըք չարեաց ընկղմեն զիս յանդունդս.
այլ դու, նաւապե՛տ, լե՛ր եւ ինձ ձեռնտու:

Փըրկեա՛ ի վըտանգէ ըզնաաբէկս
ի յալեաց ծովէ.
քանզի կորընչիմ ի մեղաց անօրէնութեան իմոյ:

26. ԲԿ.— ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Եկեացէ, Տէ՛ր, ի վերայ մեր ողորմութիւն քո,
եւ բան փրկութեան քո
պահեացէ զանձիւնս մեր ի մեղաց:

Ողորմութիւն քո եւ ճշմարտութիւն քո
եւ լոյս երեսաց քոց
առաջնորդեացէ մեզ ի յարդարութիւն:

Որ ողորմածդ ես, գըթած եւ երկայնամի՛տ Տէր,
ընկա՛լ զաղաչանքս մեր
բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին:

Տէ՛ր, ըզլուր միսանգամ քո գալըստեանդ
լուայ եւ երկեայ,
զի ուսայ ի սըրբոց պատուիրանացն՝
եթէ գաս դու ի դատել զերկիր:

Տէ՛ր, յիշեցի ըզչար ըզգործս իմ
եւ զարհուրեցայ,
զի ծանեայ ճըշմարտութեամբ
զահաւոր եւ զանաչաւ ըզքո դատաստանն:

Տէ՛ր, յիշեցի եւ ըզգութ արարչական սիրոյ քո
առ քո արարածս,
եւ ի քո գըթութիւնդ ապաւինեալ աղաչեմ,
ողորմեա՛ ինձ յաւոր յայնմիկ,
Քրիստո՛ս, արդա՛ր դատաւոր:

ԱՊՐԻԼ

27. ԱԶ.— ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Որ վերօրհնիս յաթորս քերովբէից,
ի վերայ նըստիլ յաւանակի հաճեցար.
բարեբանեա՛լ որ եկիրդ ի կեցուցանել:

Ուստի եւ մեք զյաղթական օրհնութեանցն ըզձայն
մատուցանեմք քեզ, թագաւոր փառաց,
ընդ տղայսն օրհնաբանելով.
բարեբանեա՛լ որ եկիրդ ի կեցուցանել:

Ովսաննա՛ ի բարձունս, ալէլուիա՛,
բարեբանեա՛լ եկեալ անուամբ Տեառն, ալէլուիա՛.
եւ օրհնութի՛ւն որ գալոցդ ես անուամբ Տեառն, ալէլուիա՛:

28. ԴԶ.— ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Թագաւոր գոլով քո յաշխարհ,
մըտեր ի քաղաքն Երուսաղէմ,
նըստեալ ի վերայ հողեղէն մոր յաւանակի,
կոչել զհեթանոսս յերկըրպագութիւն:

Ծերքն ոստովք ձիթենեօք,
եւ տղայքն ոստովք արմաւենեօք.
եւ երամ երամ դասութն աղաղակէին՝
Ովսաննա՛, օրհնեա՛լ եկեալ ի յանունըն Տեառն:

Ցընծացաւ սուրբ Սիովն,
բերկրեցան սուրբ եկեղեցիք.
եւ խընդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ,
օրհնէին զգալուստ քո, Փըրկի՛՛, յաշխարհ:

29. ԲԿ.— ԱԻԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Իմաստուն կուսանքըն պատրաստեալ իդ լապտերաց,

ելին ընդ առաջ երկնաւոր փեսային՝
վառեալ լապտերօք:

Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիղոյ,
անպատրաստ գրտան գալըստեան փեսային՝
շիջեալ լապտերօք:

Վասն որոյ եւ մեք պատրաստեցուք իդ հոգեւոր,
զի մըրցուք ի յառագաստ անմահ փեսային՝
վառեալ լապտերօք:

30. ԱԿ.— ՈՏՆԼՈՒԱՅԻ

Այսօր կանգնեցաւ
աւագան մըկըրտութեան,
ի թողութիւն մեղաց մերոց:

Այսօր Տէրըն մեր
լրանայր զոտս աշակերտացն
եւ պատուիրէր զայս ասելով:

Մի ոմն ի ձէնջ, եղբարք,
մատնելոց է զիս ի մահ,
եւ որոշի յաշակերտացդ:

Զայն լրեալ Պետրոսի՝
ակնարկէր առ Յովհաննէս
հարցանել թէ ո՞վ իցէ:

Բանըն զոր ասաց Յիսուս՝
տըրտմեցոյց զիւր զաշակերտսն
եւ խոովեցան ամենեքեան:

31. ԱԶ. դրձ.— Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Այսօր յարեալ ի մեռելոց
Փեսայն անմահ եւ երկնաւոր,
քեզ աւետի՛ք խընդութեան

հարսն ի յերկրէ եկեղեցի.
օրհնեա՛ ի ձայն ցընծութեան
զԱստըւած քո, Սիո՛վն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ
լուսաւորեաց զմանկունըս քո,
լուսաւորեա՛ Երուսաղէմ,
քանզի յարեալ լոյս քո Քրիստոս.
օրհնեա՛ ի ձայն ցընծութեան
զԱստըւած քո, Սիո՛վն:

Այսօր խաւարն անգիտութեան
հալածեցաւ երբեակ լուսովն,
եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան
յարուցեալն ի մեռելոց Քրիստոս.
օրհնեա՛ ի ձայն ցընծութեան
զԱստըւած քո, Սիո՛վն:

32. ԲԿ.— Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Ընդ արշալոյսն առաւօտուն
կանխեալ կանանցն ի գերեզմանն, ասելով.
Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Եւ առ նոսա ասէր հրեշտակըն,
զի՞ խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս,
Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Փութացարո՛ւք, ո՞վ սուրբ կանայք,
եւ պատմեցէ՛ք աշակերտացն, ասելով.
Քրիստոս յարեալ ի մեռելոց:

33. ԴԶ. դրձ.— Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Կանանցըն կանխելով ի թաղումըն Կենդանոյն՝

տեսին ըզվէմն ի դրանցն ի բաց մերժեալ:

Թափոր ըզգերեզմանն եւ ունայն տեսանէին,
եւ տրտմութեամբ լային յուսահատեալք:

Մա՛յր խաչեցելոյն, զի՛ լաւ յուսահատեալ,
քանզի Քրիստոս փառօք մեծաւ յարեաւ:

34. ԵՐԳ ԻԻՂԱՐԵՐԻՑ

Փա՛ռք յարութեան քո Տէր.

ո՛չ դադարեցայց, Քրիստոս, օրհնել զքեզ
զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Փա՛ռք յարութեան քո, Տէր.

ո՛չ դադարեցայց, Յիսուս, գովել ըզքեզ
զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ես ոչ դադարեցայց, Փրկի՛չ,

փառաւորել ըզքեզ

զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Լուսապայծառ հրեշտակըն

նստելով ի կենսատու գերեզմանին,

եւ անտէր կանանցն՝ յարեա՛ւ Աստուած:

35. ԴԶ. դրձ. — ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Այսօր բերկրեալ Եկեղեցի Հայաստանեայց՝
ուօնէ հանդիսի ըզյիշատակ նորոց վկայից,
որք մատնեցին զանձինս իրեանց
նահատակութեամբ առաքիւնութեան՝
վաւրն հաւատոց եւ հայրենեաց.
աղօթիւք սոցա, Տէ՛ր, պահեա՛ զմեզ:

Այսօր տիեզերքը սոսկացեալ՝ հիացմամբ տեսին
Նոր Յորդանան արեամբ ձեւացեալ,

եւ ի վերուստ երկինք պատառեալ,
ուստի Հօրըն ձայն վըկայեալ՝
«Դոքա որդիք եմ իմ ընտրեալ»:
աղօթիւք սոցա, Տէ՛ր, օրհնեա՛ զմեզ:

Այսօր հրեշտակըք փութացան աղընդունել
զգունդ բազմութեան սուրբ նահատակաց,
քանզի լուսն Տեսողն ըզձայն՝
«Եկա՛յք, իմոյ Հօրըն օրհնեալք,
ժառանգեցէ՛ք զարքայութիւնն ձեզ պատրաստեալ»:
աղօթիւք սոցա, Տէ՛ր, խմբեա՛ զմեզ:

Այսօր խայտալ նշխարեալ երկիրս մեր Հայաստան
ընդ խմբումբն տօնի Նահատակացս Ապրիլեան,
զի սերմանեալ նշխարըք սոցա ընդ ամենայն կողմանս իր՝
նորոյ գարնան կենդանութեան
տան անտիս յուսոյ լըրման.
աղօթիւք սոցա, Տէ՛ր, կանգնեա՛ ըզսա:

Եկա՛յք, մանկունք Նահատակաց,
ըզսոսա կայցուք առ պարծանս մերոյ հայրենեաց,
պի՛նդ փարեցուք զաւանդութեամբք
որոց վաւրն սոքա ըզկեանս իրեանց եղին.
եւ վարեցուք օրինակաւ մարտի սոցա,
եւ կրտակաւ գոր մեզ ետուն իբր ազգիս կենաց գորաւ.
աղօթիւք սոցա, Տէ՛ր, կեցո՛ ըզմեզ:

ՄԱՅԻՍ — ՅՈՒՆԻՍ

36. ԴԶ. — ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Համբարձաւ Տէրըն մեր յերկինս,
ասելով աշակերտացն,
նըստարո՛ւք ի քաղաքիդ Երուսաղէմ,
մինչեւ զգենուցուք զօրութիւն ի բարձանց:

Միաբանեալ սուրբ առաքեալքըն
միախոհ եւ միակրօն,
միաբան ճշտեին ի սուրբ վերնատանն,
եւ ակն ունէին գալստեան սուրբ Հոգւոյն:

Յանկարծակի եհաս
ի մեանութիւն լուսոյ փայլման.
եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքեալսն,
մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

37. ԴԶ. դրձ.— ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Առաքելոյ աղանոյ
իջանելով մեծածայն հընչմամբ ի բարձանց,
ի մեանութիւն լուսոյ փայլման
հրազինեաց անկիզելի զաշակերտսն,
մինչդեռ ճշտեին ի սուրբ վերնատանն:

Աննիթական աղանի,
անքըննելի, որ քըննէ զխորս Աստուծոյ,
զոր առեալ ի Հօրէ՝
պատմէ զահաւոր եւ ըզմիսանգամ գալուստն,
զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս,
ելողին ի Հօրէ Հոգւոյն սրբոյ.
որով առաքեալքն արբեցան անմահական բաժական,
եւ հրաիրեցին զերկիրս ի յերկինս:

38. ԲԿ.— ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ Բ. ՕՐՈՒԱՆ

Այսօր երկնայինքն ուրախացան
ընդ երկրաւորացս նորոգման.
քանզի նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ վերնատունն.
որով նորոգեցան դասք առաքելոցն:

Այսօր հողանիթեայ բնութիւնս ցընծայ

ընդ Հօր հաշտութեան.
քանզի որ երարձ զՀոգին ի մարդկանէ մարմին եղելոց,
դարձեալ վերըստին ըզնոյն պարգեւէ:

Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցընծութեամբ
զգալուստ սուրբ Հոգւոյն,
որով զարդարեցան ի զգեստն լուսափայլս եւ գերապայծառս.
երգեն ընդ սրովբէսն զերեքսրբեցին:

39. ԴԿ.— ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ Է. ՕՐՈՒԱՆ

Ի համբառնալ Բանին յերկինս
եւ ի նստիլ ընդ աջմէ Հօր,
զուարճացեալ առաքելոցն երկրպագէին,
օրհնելով ըզՀայր՝ զառաքող Բանին:

Համահաւաքեալ գունդըք սրբոցն
ի վերնատունըն խորհրդոյ,
համբարձմամբ աչաց սպասէին Հոգւոյն.
օրհնելով ըզՀայր՝ զառաքող Բանին:

Յանկարծահաս հնչմամբ հեղեալ
կենդանարար աղբիր լուսոյ.
անմահական կենաց լուսով զարդարեալ.
որք օրհնէին ըզՀայր՝ զառաքող Հոգւոյն:

40. ԴԶ. դրձ.— ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ Դ. ՕՐՈՒԱՆ

Արեգակն արդարութեան Քրիստոս ծագեալ յաշխարհ՝
հալածեաց ըզխաւարն անգիտութեան,
եւ յետ մահու եւ յարութեան
համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց.
որ երկրպագի յերկնաւորաց եւ յերկրաւորաց
ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն.
վասն որոյ եւ մեք երկիրպագանեմք Հօր
հոգւով եւ ճըշմարտութեամբ:

Որ փոխանակ ծոցածին Բանին որ ել յերկինս,
առաքեցաւ անտիքըն Հօր ի բարձանց
Հոգին ճըշմարտութեան,
մըխիթարել զորս յԱդամայ տըրտմեցելոց
եւ հրագինել զընտրեալ դասս առաքելոց.
վասն որոյ եւ մեք երկիրպագանեմք Հօր
հոգւով եւ ճըշմարտութեամբ:

Այսօր տըրտմական եւ գիշերային լուծան երկունք
ծնընդեան մախամօրն.
քանզի զծնեալսն մարմնով ի մահ եւ յապականութիւն,
վերըստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի.
վասն որոյ եւ մեք երկիրպագանեմք Հօր
հոգւով եւ ճըշմարտութեամբ:

41. ԴԿ.— ՀՈԳԵԳԱԼՍԵՆԱՆ Դ. ՕՐՈՒԱՆ

Աղբիր կենաց բաշխող շնորհաց
Հոգիդ իջեալ ի բարձանց,
զանապական պարգելքս քո
բաժանեցեր յառաքելսն:

Որ ի վերայ ջուրցըն գոլով
ստեղծանէիր զարարածս.
իջեալ ի ջուրս առազանին՝
ծնանիս որդիս Աստուծոյ:

Որ զարդարեալ նորոգես միշտ
ըզնոր քո զեկեղեցի.
պէս պէս շնորհաց քոց պարգեւօք
փայլին մանկունըք սորա:

42. ԴԿ. դրձ.— Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

Անձինք նըրիեալք սիրոյն Քրիստոսի,
երկնաւոր մահատակք եւ կուսանք իմաստունք.

ի պարծանքս ձեր բարձրացեալ տօնէ
մայր Սիովն դըստերօքըն իւրովք:

Բարբառք երկնաւորք լըցին զերկիր.
քանզի հոտ անուշից բուրեցայք ի Քրիստոս.
ողջակէզք բանաւորք եւ զոհք փըրկութեան,
եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ:

Հոփսիսմէ մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի.
ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ընդ հրեշտակս.
եղեր օրինակ սըրբութեան կուսանաց,
վարդապետութիւն արանց արդարոց:

43. ԳԶ.— ՇՈՂԱԿԱԹԻ

Ուրախ լեր, սուրբ Եկեղեցի,
քանզի Քրիստոս Արքայն երկնից
այսօր պըսակեաց ըզքեզ խաշին իւրով.
եւ զարդարեաց զամուրջս քո
սքանչելի փառօքն իւրովք:

Խընդա՛ յոյժ, դուստըր Սիովնի.
քանզի երկիրս երկինք եղեն
այսօր վերըստին քո նորոգմամբ,
եւ թագաւորն երկնաւոր հաճեցաւ
հաճեցաւ ըբնակիլ ի քեզ:


Ընդ դասս երկնաւոր զօրացըն
վեր առեալ տօնեմըք քեզ
այսօր զանդադար փառատրութիւնս.
ուրախ լեր, հարսն անարատ,
անընդին քո խորհրդով:

44. ԴԿ.— ՇՈՂԱԿԱԹԻ

Էջ միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նըմա,
ձայնք հընչեցին սանդարամետք անդընդոց:

Տեսեալ ըզլոյս մեծ հայրապետին Գրիգորի,
պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային:

Եկա՛յք, շինեցուք սուրբ ըզխորանըն լուսոյ,
քանզի ի սմա՛ ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:



ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Խորհուրո խորին անհաս անբակիզան,
որ զարդարեցեր զվերին պետութիւնդ,
ի յառագաստ անմատոյց լուսոյն,
գերապանձ փառօք զդասըս հրեղինաց:

Անճառահրաշ զօրութեամբ
ստեղծեր զԱդամ պատկեր տիրական,
եւ նագելի փառօք զգետատրեցեր,
ի դրախտն ադենի տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո սուրբ միածնիդ
նորոգեցան արարածք ամենայն,
եւ վերըստին մարդն անմահացաւ,
զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Թագաւո՛ր երկնատր.
զեկեղեցի քո անշա՛րժ պահեա.
եւ զերկրոպագոս անուանըդ քոս
պահեա՛ ի խաղաղութեան:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ,
որ խաչեցար վասն մեր. ողորմեա՛ մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ,
որ խաչեցար վասն մեր. ողորմեա՛ մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ,
որ խաչեցար վասն մեր. ողորմեա՛ մեզ:

*
 **
 Մարմին տերունական
 եւ արին փրկչական կայ առաջի.
 երկնային զօրութիւնքն լաներեւոյթս երգեն
 եւ ասեն անհանգիստ բարբառով.
 «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէր զօրութեանց»։

*
 **
 Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.
 որ էնն Աստուած՝ աստ բազմեցաւ։
 Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
 սուրբ ողջունի հրաման տուաւ։
 Եկեղեցիս մի անձն եղեւ,
 համբոյրս յօդ լրման տըլաւ։
 Թշնամութիւնքն հեռացաւ,
 սէրն լընդհանուրս սփռեցաւ։
 Արդ, պաշտօնեայք, բարձեալ ըզձայն՝
 տուք զօրհնութիւն ի մի բերան
 միասնական աստուածութեանն,
 որում սրովքէքն են սրբաբան։

*
 **
 Օրհնեա՛լ է Աստուած։
 Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա՛։
 Չմարմին իւր տալ մեզ կերակուր
 եւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ. ալէլուիա՛։

Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք ըզլոյս. ալէլուիա՛։
 Ծաշակեցէք եւ տեսէք զի քա՛ղցր է Տէր. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզՏէր յերկինս. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզնա ի բարձունս. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզնա, ամենայն հրեշտակք նորա. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզնա, ամենայն զօրութիւնք նորա. ալէլուիա՛։



Մարմին տերունական
 էւ արին փրկչական կայ առաջի.
 երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն
 էւ ասեն անհանգիստ բարբառով.
 «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէր զօրութեանց»։

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.
 որ էնն Աստուած՝ աստ բազմեցաւ։
 Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
 սուրբ ողջունի հրաման տուաւ։
 Եկեղեցիս մի անձն եղեւ,
 համբոյրս յօդ լրման տրուաւ։
 Թշնամութիւնքն հեռացաւ,
 սէրն լընդհանուրս սփռեցաւ։
 Արդ, պաշտօնեայք, բարձեալ ըզձայն՝
 տուք զօրհնութիւն ի մի բերան
 միասնական աստուածութեանն,
 որում սրովքէքն են սրբաբան։

Օրհնեա՛լ է Աստուած։
 Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա՛։
 Չմարմին իւր տալ մեզ կերակուր
 էւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ. ալէլուիա՛։

Մատի՛ք առ Տէր էւ առէ՛ք ըզլոյս. ալէլուիա՛։
 Ծաշակեցէք էւ տեսէք զի քա՛ղցր է Տէր. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզՏէր յերկինս. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզնա ի բարձունս. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզնա, ամենայն հրեշտակք նորա. ալէլուիա՛։
 Օրհնեցէ՛ք ըզնա, ամենայն զօրութիւնք նորա. ալէլուիա՛։



ԵՐԳԵՐ

1. ՕՐՀՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ի վեհ բարձանց Սուրբ Սիոնի,
Թըռիչս առեալ աղաւնի,
Ի Շնորհալուոյն բարձրացեալ գահ,
Մի՛ մերձեցի մմա մահ:
Հապօ՛ն, եղբարք իմ Հայկազնեան,
Օ՛ն, մաղթեցուք միաբան.—
Պահեա՛, ո՛վ Տէր, անասան
Զսուրբ Աթոռ Կիլիկեան:
Կեցցէ, կեցցէ՛ առ յաւետ
Տէր Գարեգին Հայրապետ:

2. ՄԱՂԹԵՐԳ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

Կիրակնօրեայ սուրբ յարկին
Մենք սաներն ենք յուսաբաղձ,
Կայծերու պէս յուսածին
Ցայտած՝ սրտէն պերն մախնեաց:
Ուստի փալե՛նք անխըռով,
Ո՛վ հարազատ զարմ արի,
Հաւատաւոր գընացֆով՝
Լոյս-աղբիւրին ցանկալի:

Եկեղեցին սրբազգեաց՝
Ժառանգ անգին, հրաշափառ,
Մեր խոյանքին վերասլաց
Թափն է խիզախ բոցավառ.

Հայ մըշկահոտ սրբութեան
Բոյրովն օծած մեր հոգին,
Մեր երթին մէջ յաղթական՝
Թումբերն ամէն պիտ՝ փըշրի՛ն:

Կեցցե՛ն յաւերժ, անասան,
Հիմնադիր եւ բարերար,
Կիրակնօրեայ յուսոյ տան
Ջահակիրներ վեհափառ:
Հնչեցէ՛ք յար, ծնծդաներ՝
Մեր սրտերուն ցնծագին,
Որ վառ մընայ դարեր դեռ՝
Սրբաճանչ Հայ հոգին....:

3. ԿԻԼԻԿԻԱ

Երբ որ բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ճըմեռ,
Զըֆնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր փաղցրիկ օրեր,
Երբ որ ծիծառն ի բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերեւ՝
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերըն Սուրբիոյ,
Լեռնն Լիբանան եւ իւր մայրեր.
Տեսի գերկիրն Իտալիոյ,
Վեներտիկ եւ իւր կօնտուներ,
Կըղզի մման չի՛ք մեր Կիպրեայ,
Եւ ո՛չ մէկ վայր է արդարեւ՝
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
 Ուր ամենայն իդո՞ կ'աւարտի.
 Հասակ մը՝ ուր հոգին ի տենչ՝
 Յիշատակաց իւր կարօտի.
 Յորժամ քնարն իմ ցրտանայ,
 Սիրոյն տալով վերջին բարեւ,
 Երթամ մնջել յիմ Կիլիկիա,
 Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

4. ՕՐՀՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ամէն Հայի սրբոց բոլրած,
 Լըսի՛ր այս ձայն, ո՛վ Աստուած:

Երկար կեա՛նք տուր Հայրապետին,
 Երկար օրեր՝ Հայոց Հօր:

Տէր, անասա՛նք պահիր դու միշտ
 Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

5. ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգւոյս
 Ինչպէս քարայր մ՛ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ
 ու լոյս,
 Իր գաւթովն հիւրընկալ, իր լայն բնով ու հեռուն
 Կանգնած իր լուռ խորանով, որ կարծես մաւ մ՛է
 ծըփուն....:

Եկեղեցին հայկական, ես աչքս գոց կը տեսնեմ
 Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ,
 Իր սեղանէն մըխացող գուլայ-գուլայ խունկերով
 Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխոով....:

Եկեղեցին հայկական բարձր բե՛րդն է հաւատքին
 Իմ պապերու՝ որ հողէն զայն քար առ քար հանեցին
 Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ,
 Ու թաղուեցան անոր մէջ հանդարտութեամբ, հեգու-
 թեամբ....:

Եկեղեցին հայկական մեծ վարագոյր մ՛է բանուած,
 Որուն ետեւ, սրկիհին մէջ կ'իջնէ ի՛նքը Աստուած,
 Որուն առջեւ՝ գլխահակ կու գայ իմ ազգըս ամբողջ
 Հաղորդուիլ անցեալին հաց ու գինով կենսառողջ:

Եկեղեցին հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
 Նաւահանգիստ մ՛է խաղաղ, ցուրտ գիշերին՝ հուր եւ բոց,
 Ու տօթակէզ ցերեկին անտառ մըն է ստուերոտ՝
 Ուր շուշաններ կը ծաղկին Շարականի գետին մօտ:

Եկեղեցին հայկական մէն մի քարին տակ գետնի
 Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա՛յ մը ունի.
 Եկեղեցին հայկական հայ հոգիին եւ մարմնոյն
 Զըրահանդե՛րձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաշոյն
 Եւ զանգակներն են բոմբի՛ւն, եւ երգն է միշտ յաղթու-
 թի՛ւն....:

6. ՀԱՅ ԱՊՐԻՆՔ ԵՂԵԱՐՔ

Հա՛յ ապրինք, ե՛ղբարք, մարդկութեան մէջը:
 Հա՛յ կնքեր է մեզ պատմութեան էջը.
 Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք:
 Եղբարք, հա՛յ ապրինք:

Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնէնք,
 Հաւատոյ եղանք միշտ ախոյեան մեմք,

Հայը զարմացուց գերկիր եւ գերկինք:
Եղբարք, հա՛յ ապրինք:

Մեր ազգն հետեւող է ճիշդ Յիսուսի,
Որ խաչն այսֆան դար առած է յուսի,
Ո՛չ, չի՛ խոնարհիր, չ'ը՛լլար դասալիք:
Եղբարք, հա՛յ ապրինք:

Այո՛, խաչին կեանք՝ կեանք է վշտալից,
Այո, հայուն կեանք՝ կեանք է ցաւալից.
Բայց խաչն յաղթութեան ունի վեհ կնիք:
Եղբարք, հա՛յ ապրինք:

Ո՛չ, ճակատագիր մեր չէ՛ միշտ տըխուր,
Զքշուառութեան ուտել հացն ու ջուր,
Նոր երջանկութեան ապագա՛յ մ'ունիմք:
Եղբարք, հա՛յ ապրինք:

Հա՛յ ապրինք, որ մեր որդիքն ալ, եղբարք,
Կարենան պարծիլ որ գմեգ ունին հարք,
չըլլա՛նք, հայ անուան չըլլա՛նք նախատինք:
Եղբարք, հա՛յ ապրինք:

7. ԲԱՐԻ, ԳԵՂԵՑԻԿ, ԱՌԱՔԻՆԻ ԸՆԿԵՐԸ

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկե՛րը մարդուն,
Որ փայլեցընէ արեւու պէս պատկերը մարդուն:
Ինչ մարդ ունենայ իր մօտը հաւտարիմ ընկեր,
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քի՛չ է լղարձեալ.
Այնպէ՛ս է հոգեկան լուսատու լապտերը մարդուն:
Ընկե՛ր եմ ասում, աստուածավախ ճշմարի՛տ ընկեր,

Որ Բարձրացընէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իւր վրայ ֆալած ժամանակը,
Կտրին, հարագատ ընկե՛րն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան Աշըգ,
Զի՛ սպիտակիլ ամենեւին մէկ հերը մարդուն:

8. ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

Մեծ պայքարի ազատութեան
Շատ զոհեր տուինք,
Վառ յոյսերով երջանկութեան
Սերը երգեցինք:

Մեր արիւնը, մեր արցունքը
Դարեր շարունակ
Փայփայեցին մեր յոյսերը
Երկար ժամանակ:

Ապրի հայը, հայ հերոսներ
Քաջաց զաւակներ,
Սահակ-Մեսրոպ անմահ հայեր
Լուսատու ջահեր:

9. ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

Պանծացէ՛ք օն, Սահակ-Մեսրոպ,
Հայ բախտին փաջ պահապան.
Զեր շաւիղին մենք սրտատրոփ
Կը հետեւինք անխափան:

Դուք սերունդներ բիր մըքապատ
Մահուան ճանկէն փրկեցիք,

Ձեզմով հայուն կեանքն անապատ
Դըրախտ եղաւ գեղեցիկ:

10. ՈՎ ՄԵԾԱՍՔԱՆՁ ԴՈՒ ԼԵՋՈՒ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ հեշտ բարբառ մայրական,
Քաղցրահրմէշիւն բառերուդ
Նըման արդեօք այլ տեղ կա՞ն:

Դու որ նախ ինձ հրմէջեցիր,
Նախ սիրոյ, ո՛հ, հեշտ խօսքեր,
Այլ նախ ըզքեզ թոթովելս
Դեռ իմ մըտքէն չէ ելեր:

*Իմ մայրենի քա՛ղցըր լեզու,
Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ.
Կեա՛ց միշտ, լեզո՛ւդ հայկարժան,
Կեա՛ց ծաղկալից, ծաղկաւէտ:*

Լեզու համակ սիրաշարժ,
Քանի՛ նոխ, պերն ու պայծառ
Մինչ կը հրմէջես դուն քեզի
Սըրտերն ամէն դողահար:

Հրմէ՛, հրմէ՛ յաւիտեան,
Վեհ դիւցազանց պերն երգ դու.
Թօթուէ՛ փռշիդ, խոր մութէն
Ե՛լ երեւան, պերն երգ դու:

Իմ մայրենի քա՛ղցըր լեզու...

Յաւերժական Սուրբ Գըրոց մէջ
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն,

Կըշոեալ անոյշ քո տողերդ
Թող ամէն սիրտ արծարծեն:

Շընորհ ունել Արարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շըրթունքս սըրտէս քորքոքած
Կ'աղաղակէ անարգել:

Իմ մայրենի քա՛ղցըր լեզու...

11. ԵՂԻԾԷ

Ոսկեծըղի, գեղեցկատիպ
Ո՛վ իմ գրքոյկ ոսկեշունչ,
Ազգիս փառքը, անբախտ օրը
դու փարոզող անմըռունչ:

Ո՞վ պիտի տար այն անըսպառ
սերն ու գութը դէպ հային,
Թէ որ մարդիկ քեզ, ո՛վ գրքոյկ,
Երբեմն չկարդային:

Քեզ կարդալով՝ կը մոռանամ
թերութիւններ մեր ազգին,
Դէպ հայ եղբարքն գութ ու սիրով
միշտ կը լեցուի իմ հոգին:

Մըտքիս մէջը ես միշտ կ'ըսեմ.
«Սերունդք Վարդան մեր քաջին
Անհրմար է՝ անփառունակ
սարուկ մընան կամ կորչին»:

Կամ՝ տեսնելով հեգ հայ տէրտէր,
Սուրբ Ղեւոնդին կը յիշեմ,

Ու յուսահատ տըրտում մըտքեր
իմձմէ հեռո՛ւ կը քըշեմ:

Եղիշէին հայք կարդալով
նոր յոյսերով կը լեցուին,
Հայի գալոց բարիք անոնց
հոգւոյն առջեւ կը բացուին:

Հա՛յ պատանի, շուտ շուտ կարդա
այս գըրքոյկը ոսկետառ,
Որ համոզուիս՝ թէ մեր հայը
կորչելու ազգ չէ ի սպառ:

12. ԵՏԵՒԷՍ ԵԿՈՒՐ

Եթէ զիս տանիս դէպի Յորդանան՝
Բացուած երկինքի հրաշքներուն ներքեւ,
Կու գամ վայելել Գու սիրոյդ պարգեւ
Վայրերն այն դալար, ուղիներն փափկութեան:

Կու գա՛մ ետեւէդ եթէ տանիս զիս
Կանայի զուարթ ակումբներուն մօտ,
Ուր թակոյկներուդ գինին ծաղկահոտ
Պիտի արքեցնէ՛ օրերը կեանքիս:

Բայց կը վարանիմ գալ Գեթսեմանի՝
Ուր փունով մ'աչքերս պիտի ծանրանան.
Գուցէ այն ըլլայ իմ փունը մահուան,
Ու մեծ Ոչինչին գիրկը զիս տանի...:

Ահ, միթէ կրնա՞մ գալ Գու ետեւէդ
Երբ խաչը ուսիդ կ'ելլես Գողգոթա,
Բայց ի՛նչ սերտ հրապոյր, ի՛նչ բուռն ոյժ է դա՝
Որ զիս դէպի հոն ալ կ'տանի Քեզ հետ:

13. ԾՆՆԴԵԱՆ ԾԱՌ

Տեսէ՛ք սիրուն ծննդեան ծառ,
Տեսէ՛ք, փայլի ի՛նչ պայծառ,
Ոհ, ի՛նչ գիշեր հիանալի,
Յիսուս ծնաւ սիրելի:

Ամէն աչքեր խանդով յառին
Բեռնաւորուած սա ծառին.
Ամէն սիրտեր արդ թող ցնծա՛ն,
Զի ծընաւ Յիսուս Մեսիան:

Յիսուս Փրկիչ, Դուն ինձ համար
Երկնից իջար մեր աշխարհ,
Դու որ ինձի կեանք ես տուեր՝
Կու տամ սի՛րտըս քեզ նուր:

14. ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Խոր մութին մէջ այս գիշեր,
Երկինք, երկիր են թաղուեր.
Բայց դուք, սիրո՛ւն մանուկներ,
Օն վերցուցէ՛ք ձեր աչքեր,
Տեսնել մսուր շողշողուն
Լուսով սիրուն ողողուն:

Հոն մերկ, ցուրտէն դողալով,
Կ'հանգչի մանուկ մը խոնարհ,
Երկնքի փառքը թողլով
Փրկել եկած մեր աշխարհ.
Մեզմէ կ'ուզէ իբր նուր՝
Միայն սիրով տա՛մ սրբտեր:

15. ԵՐԳ ԾՆՆԴԵԱՆ

Մսուրին մէջ ցուրտ ու անշուք
Մերկ, անծածկոյթ յարդին վրայ,
Փոքրիկ Յիսուսը անշշուկ
Տեսէ՛ք ի՛նչպէս կը դողդողայ:

Հայր Յովսէփը եւ իր մայրը
Քովը կեցեր են շուարած,
Գորովով լի, անուշ, գողտրիկ
Աչքերն անոր վրայ յառած:

Այրին վերել լոյսն է ծագած,
Երկինք երկիր կ'ողջունէ.
Մարդիկ հրեշտակ գիրար գրկած՝
«Փառք ի բարձունս» կը նուագեն:

16. ՔԱՋ ՎԱՐԴԱՆ

Իմ հայրենեաց հոգի վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան.
Որ Տղմուտի ափերի մօտ,
Վաթսուն հազար կտրիններով,
Զարկիր, զարկուար, ինկար փաջ-փաջ,
Պարսիկ սփռած ի ձախ ու աջ.

*Իմ հայրենեաց արեւ վարդան,
Արեւս ար'ուող եղնի դուրպան:*

Աւետարանն ու խաչն առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր,
Եւ դուն ալ հետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուիր,

Որ հայրենեաց շողայ արեւ
Շաւարշանայ դաշտին վերել.

*Իմ հայրենեաց արեւ վարդան,
Արեւս ար'ուող եղնի դուրպան:*

Արիւնդ կարմիր կարմիր թափուաւ,
Դաշտ ու ծաղիկ ներկուեցաւ.

Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ-պաղ թափեց ցօղիկն յաչից,
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Պլպուլն երգէ դրախտի սարին.

*Իմ հայրենեաց արեւ վարդան,
Արեւս ար'ուող եղնի դուրպան:*

17. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թէ հայրենեաց պսակադիր
Գողթնի ֆնարք լոեր են,
Երկնից թող գան անմահ հոգիք՝
Հայոց փաջերն պսակել:

Մասեաց գագաթն թող գան բազմին
Երկնից գունդ-գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան՝
Հայոց արիւն հոտոտել:

Փախէ՛ք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցօղէ՛ք ձեր ցօղեր.
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց փաջաց արիւնով:

Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այն դաշտին մէջ ո՛չ խոտ, վարդ,

Այլ վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Քանդակագործ քաջ Նդիշէն
Գրիչ ի ձեռն գայ յԱրտագ,
Զափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ՝
Կեանք, մահ, հաւատք վարդանայ:

Ո՛հ, վարդանայ անուան արժան
Մասի՛ս կանգնի մահարձան,
Մեծաստաններ, խաչն ի գմբէթ,
Աւետարան, սուրբ տաճար:

18. ՊԼՊՈՒՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պըլպուլիկդ, երգէ՛ ի սարէն,
Զանմահ քաջն հայոց, երգէ՛ հոգւոյս հետ:

Թաղէի վանուց ձեռնիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ.
Ի խաչին թեւէն թըռայ ու հասայ,
Գըտայ գփեզ ի դաշտ քաջին վարդանայ:

Պըլպուլ, քեզ համար մեր հարքն անացին
Թէ չէ՛ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին.
Նդիշեայ հոգեա՛կն է քաղցրախօսիկ,
Որ գվարդան ի վարդըն տեսնէ կարմրիկ:

Զմեռն յանապատ կու գնայ, կայ ի լաց,
Գարունն յԱրտագ գայ ի թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յՆդիշէին ձայն
Թէ պատասխանիկ մարդեօք տա՞յ վարդան:

19. ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի՞ էլ լոենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
Իր օրհասական սուրը՝ մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լացուկոծին:
Ասացէ՛ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի՞ էլ լոենք:

Հիմի՞ էլ լոենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրֆով տիրեց մեր երկրին,
Զնջեց աշխարհից Հայկեայ անունը,
Հիմի՞ց կործանեց Թորգոմայ տունը:
Խլեց մեզանից թագ, եւ խօսք եւ գէնք,
Հիմի՞ էլ լոենք:

Թող լոէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք որ ունենք հոգի ու սիրտ քաջ՝
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք,
Ու այնպէ՛ս լոենք:

20. ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Լոենք: Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին:
Մնացի մենակ, հոգիս վրդոված,
Զեռներըս ծոցիս, գլուխս քարշ արած:

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն:

Նորա տխրամած դեմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:

Ախ ցուլ՝, փայլէ՛, տխրադեմ լուսին,
Գուցէ քո փայլից փայլ տաս եւ Հային:

Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,
Թէ ի՛նչպէս կորաւ Հայ ազգին գահը:
Կամ ի՛նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը, աշխարհն Հայաստան:

21. ՄԵՐ ՇԱՐՔԵՐՆ ԵՆ ԱՄՐԱԿՈՒԹ

Մեր շարքերն են ամրակուռ,
Անպարտելի եւ ամուր,
Արեւելէն արեւմուտ
Հնչում է անունը մեր:

*Մենք վարդանեան քաջ մարտիկներ,
Բա՛րձր պահենք դրօշը մեր,
Հաւատաւոր եւ միշտ արի՛,
Ջահակիրներ հայ պայքարի,
Արդա՛ր մեր պայքարի:*

Մեր բանակը փառահեղ
Դաշտում, ձորում, ամէն տեղ,
Սպարապետ քաջ Վարդան
Տանում է մեզ յաղթութեան:

Մենք վարդանեան քաջ մարտիկներ...

22. ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐՈՒ ԵՐԳԸ

Լուսաւորիչ առաքեալներ
Սիրոյ մէջ մկրտուեցան,

Ճշմարտութեան սուրբ վկաներ
Յիսուսի նմանեցան:

Արդարներուն յիշատակը
Օրհնութեամբ կը կատարուի,
Տիրոջ սիրոյն զոհուածներուն
Երանի, բի՛ւր երանի:

Սիրոյ մրագ առաջնորդներ
Աշխարհի լոյս սփռեցին,
Անարգուեցան, հալածուեցան,
Բայց շատ է հոն վարճերնին:

Երբ Աստուծոյ այն օրը գայ,
Սրբոց խաչն ալ տէրունի,
Երանելի ու պանծալի՝
Կը շողայ ու կը փայլի:

Փոքրը հօտին քաջ հովիւներ
Անձերնին սուրի տուին.
Կրակներու մէջ օծուելով
Պաշտօննին կատարեցին:

Ուր որ Յիսուս, Աւետարան
Քարոզուի ու պատմուի,
Սրբոց վարքն ալ իբր օրինակ
Կը յիշուի ու կը տօնուի:

23. ԻՄ ՈՒՌՏԸ

Ուխտեցի ես քեկ սրտով
Յանձնել ինձգիմքս Յիսուսին,
Կ'ըզամ, հանէ՛ ինձմէ թող
Անձնապաստան յոյսը սին:

Որովհետեւ փորձով շատ
Տեսայ թէ ես անկարող,
Զեմ հասկնար սիրտըս վառ,
Զար կիրքերով աւերող:

Գաղտնիք մըն եմ ինձի ես,
Խաւարամած ու անլոյս.
Դուն աշխարհին մեծ լոյսն ես,
Լոյսի՛դ կու գամ, ո՛վ Յիսուս:

Հըպարտ սիրտըս ըրէ հեզ,
Սրբէ՛ մեղքերն իմ բոլոր,
Հոգիով քեզ ողջակէզ
Ըլլալ կ'ուզեմ բանաւոր:

Ուխտեցի ես բեկ սրտով
Յանձնել ինքզինքս Յիսուսին.
Ան ինձ նոր կեանք շնորհէ թող,
Մաքուր սիրտ մ'ալ միասին:

24. ԱԼԷԼՈՒԻԱ

Սիրտըս թեթեւ է թռչունի նման,
Երկինքի նման՝ սիրտըս ջի՛նջ այնքան.
Ալէլուիա՛, Ալէլուիա՛,
Ներսըս եւ չորս դիս զանգե՛ր կը խնդան
Զուարթ Զատկուայ.
Ներսըս եւ չորս դիս զանգե՛ր կը զնգան,
Ալէլուիա՛, գուարթ Զատկուայ...:

Կեանքը գեղեցիկ է աստուածօրէն,
Կեանքը ծննդա՛յ է ու տօ՛ն ցնծեղէն,
Ալէլուիա՛, Ալէլուիա՛,

Նոր աստղեր կ'իջնեն, հրեշտակներ կ'երգեն
Աշխարհի վերայ.
Նոր աստղեր կ'իջնեն, հրեշտակներ կ'երգեն
Ալէլուիա՛, աշխարհի վերայ:

Մըռայլ կամարէն մութ ամպերն անցան,
Բացուեցան աչքերս լոյսի՛ն առտուան,
Ալէլուիա՛, Ալէլուիա՛,
Նոր եւ ուրախ ե՛րգ կայ լեզուիս վերան,
Յիսուսի՛ ծընայ...:
Նոր եւ ուրախ ե՛րգ կայ լեզուիս վերան,
Ալէլուիա՛, Յիսուսի ծընայ...:

25. ՓՐԿԶԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Լո՛ւտ գիշեր, սո՛ւրբ գիշեր.
Ծով ու ցամաք՝ քնով են խաղաղ.
Մեղմ կը փայլի աստղը Բեթլեհէմէն,
Եւ հեռուէն շատ աչքեր կը գրաւէ
Հոն՝ ուր Փրկիչը ծընաւ:

Լո՛ւտ գիշեր, սո՛ւրբ գիշեր.
Երգ մը ահա հովտին վերայ
Հրեշտակներուն անթիւ խումբը կ'երգէ,
Եւ ցնծութեան աւետիս կը բերէ.
«Տէ՛րը, Փրկի՛չը եկաւ»:

Լո՛ւտ գիշեր, սո՛ւրբ գիշեր.
Ո՛վ դու երկիր, ալ արթնցի՛ր.
Քու օրհնութիւնդ արդ վե՛ր թող ելլէ,
«Փա՛նք Աստուծոյ՝ ի բարձունքս» երգէ,
«Խաղաղութի՛ւն աշխարհին»:

26. ԲԵԹԼԵՀԵՄԻ ԱՍՏՂԻՆ

Շողա՛, ո՛վ աստղ, հոգիիս ու սրտիս մէջ,
Խաւարն անցնի, բացուի կեանքիս մէկ նոր էջ.
Հետեւիմ քեզ, տա՛ր զիս մըսուրն պաշտելի,
Երկըրպագեմ Յիսուս Մանկան խնկելի:

Իբրեւ Մելիոն, Գասպար եւ կամ Պաղտասար՝
Ե՛ս ալ պիտի քալեմ երկար ճոր կամ սար,
Մինչեւ գտնեմ ԷՄՄԱՆՈՒԷԼը հոգւոյս,
Եւ ընծայեմ ոսկի, կնդրուկ եւ զըմուռ:

Գիշերուան մէջ հովիւներուն պէս, յանկարծ,
Երնէկ ես ալ տեսնեմ Տիրոջ փառքն ծագած,
Լըսեմ երգը հրեշտակներուն զուարթուն.
«Փա՛ոք ի քարձունս, եւ ի մարդիկ հանութիւն»:

Շողա՛ ուրեմն, ո՛վ աստղ պայծառ, հեռաւոր,
Արդարութեան, խաղաղութեան լուսաւոր,
Մինչեւ աշխարհն Բեթլեհէմի Մանուկին
Երկըրպագէ, յանձնէ իր սիրտն ու հոգին:

27. ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Ո՛հ, ինչ սիրուն հրեշտակներ,
Մաքուր, ներմալ թեւերով,
Կը թռչին միշտ երկինքէն վեր,
Անդադար փա՛ոք երգելով:

*Սերովբէներ, քերովբէներ,
Անմեղ, անբիծ հոգիներ,
Կ'օրհնեն Տէրը ցերեկ-գիշեր,
Հըլու, ազնիւ, անվեհեր:*

Քննոյշ, քարի հրեշտակներ,
Հըգօր եւ սուրբ պահակներ,
Հսկեն արթուն մարդոց վերեւ՝
Որ պաշտեն Տէրն յարատեւ:

Սերովբէներ, քերովբէներ...

Ո՛հ, ի՛նչ քարի ես ալ այսօր,
Տէր Յիսուսի շընորհով
Թռչիմ երկինք վեր՝ անոնց հով,
Օրհնել Յիսուս, փառք տալով:
Սերովբէներ, քերովբէներ...

28. ԽԱՉԸ

Թէ պաշտումի թափն ունենաս՝
Տէրն գոյգ մը թեւ քեզի կու տայ,
Որպէսզի իր Ուժը անհաս
Սաւառնացնես երկրի վըրայ:

Թէ տեսիլներ ունենաս դուն՝
Յայտնութիւն մ'ալ քեզի կու տայ,
Որպէսզի իր Կամքը արթուն
Հանդիսացնես երկրի վըրայ:

Իսկ իր Լոյսին թէ երթաս մօտ՝
Ինքը քեզի ջահ մը կու տայ,
Որպէսզի իր Փառքն անաղօտ
Վարդավառես երկրի վըրայ:

Եթէ նետուիս իր գիրկն անուշ՝
Ինքը քեզի երգ մը կու տայ,
Որպէսզի իր Շնորհն երկնայուշ
Թրթռացընես երկրի վըրայ:

Ու այդ Ուժը, այդ Կամֆն ու Խօսք,
Այդ Կայծն ու Վրէժ, այդ Փառքը սոսկ,
Այս Շնորհն ու Շունչ, այդ Յոյսն համայն՝
Քեզի տրուած ԽԱԶՆ է միայն:

29. ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ

Տէ՛ր, կեցո՛ղու ըզՀայս,
Եւ արա՛ զնոսա պայծառս.
Կեցո՛ղ ըզՀայս, կեցո՛ղ ըզՀայս:
Զողորմութիւնդ վերին
Հանեա՛ց ձօնել նոցին.
Զի նովիմք մարթասցին
Ապրիլ յաստիս:

30. ԱՀԱ ԿՈՒ ԳԱՅ

Ահա կու գայ Յիսուս օրհնեալ
Տեսնով իր վեհ, լուսափայլ.
Հրեշտակներու հետ քիւրաւոր
Պիտ՛ երեւի այն սուրբ օր:
*Ալէլուիա՛, Ալէլուիա՛.
Ովսաննանե՛ր մենք երգենք՝
Լոյսեր հագած՝ Լոյս Յիսուսի.
Ովսաննանե՛ր մենք երգենք,
Ովսաննանե՛ր զովերգենք:*

Լուսադէմ քիւր հրեշտակներ,
Քերովրէներ անձնուէր,
Փող ու ձայնով կ'օրհնաբանեն
Օրհնեալ Գառնուկն, համօրէն:
*Ալէլուիա՛, Ալէլուիա՛.
Ովսաննանե՛ր մենք երգենք...*

Որդին Դաւթի՛ Արքան երկնի
Փայլակի պէս կ'երեւի.
Անոր առջեւ կը խոնարհին
Արեւ, աստղեր լուսածին:
*Ալէլուիա՛, Ալէլուիա՛.
Ովսաննանե՛ր մենք երգենք...*

Ի՛նչ ձայն է այս, ահեղագոռ,
Որ կը սարսէ լեռ ու ձոր.
Իր կայծ աչքէն կը սարսափին
Մեղաւորներ հողածին:
*Ալէլուիա՛, Ալէլուիա՛.
Ովսաննանե՛ր մենք երգենք...*

31. ԵՐԳ ՓԱՌԱՔԱՆՈՒԹԵԱՆ

Ներկայութիւնդ, Տէ՛ր, սիրոյ վըրան է,
Սէրդ ալ ծածանող՝ գերդ սիրուն դրօշակ.
Իսկ խաչդ ալ պատնէշ, հրգօր վահան է
Յարձակումին դէմ վատին նետարձակ:

*Փա՛ռք քեզի, ո՛վ Տէր, կրկին ու կրկին,
Որ զիս գընեցիր արիւնովդ անգին.
Ա՛լ չունիմ սարսափ մեղքի ու մահուան,
Քանզի խաչիդ տակ գըտայ ապաստան:*

Հո՛ւր ես դուն, Փրկի՛չ, սրտիս մէջ հանգչած,
Որ կու տաս մտքիս լոյս, նաճանչ ու շող,
Ուղղելու քայլերս տրկար ու յոգնած՝
Ճամբուդ մէջ խաղաղ ու արեւաշող:

Փա՛ռք քեզի, ո՛վ Տէր, կրկին ու կրկին...

Որքա՛ն սիրեցի ներկայութիւնդ, Տէ՛ր,
Որ կը տանիս զիս դալար մարմանդներ,

Ծաղկագարդ դաշտեր, ջրրարքի վայրեր,
Եւ կեանքի համար կ'ընես խոստումներ:

Փա՛ռք քեզի, ո՛վ Տէր, կրկին ու կրկին...

Աւետարանին հրաւեր-պատգամով
Եւ հաստա՛տ ֆայլով, խանդավառ երգով,
Հաւատքի կայծով ու յոյսի շողով
Եւ կեա՛նք կը պահեմ սիրոյ կրքակով:

Փա՛ռք քեզի, ո՛վ Տէր, կրկին ու կրկին...

82. ՅՈՐԴԱՌԱՏ ՍԷՐ

Ո՛վ Արարիչ, հրպէ՛ւ արտիս,
Փառքով, պատուո՛վ պատէ զիս.
Կ'անձկամ պաշտել քեզ վեհագոյն,
Հոգւով-սրտով մընայում:

*Ամէն տեղ եւ ամէն վայրկեան
Մընամ քու հետդ, անբաժան:*

Ա՛ն սիրտըս, լեցուր սիրո՛յդ չափով,
Մընամ պայծա՛ն միշտ քեզմով.
Ծառայութիւնս ալ խնկալի՝
Ըլլայ քեզի զո՛հ հանելի:

*Ամէն տեղ եւ ամէն վայրկեան
Մընամ քու հետդ, անբաժան:*

Խմցո՛ւր ինձի Կեանք գետէն,
Խօսքերդ թող զիս հեղեղեն,
Որ թէ ապրիմ, մեռնիմ, մեջեմ,
Կեանքիս մէջ միշտ քե՛զ կըրեմ:

*Ամէն տեղ եւ ամէն վայրկեան
Մընամ քու հետդ անբաժան:*

Ա՛ն, Տէր, գանձերս հետն իմ անձիս,
Բազմէ՛ կեդրոնը կեանքիս,
Տիրէ՛ հոգւոյս վրայ վերջստին,
Բնա՛ւ չգգամ զիս առանձին:

*Ամէն տեղ եւ ամէն վայրկեան
Մընամ քու հետդ, անբաժան:*

83. ԱՂՕԹՔԸ

Աղօթքը զա՛րկն է գորեղ՝ որուն դիմաց կը բանայ
Երկինքն իր դուռն երկաթեայ.
Եւ հայցագին կանչն է ան՝ որուն կու տայ պատասխան
Երկնանիստ Հայրն անպայման:

Աղօթքը բո՛ցն է սիրոյ՝ որուն ջերմէն կը հալին
Ժայռե՛րն անգամ ահագին.
Եւ հոգիէ՛ն ուժ առնող ուժանակն է հաւատքի՝
Որմէ լե՛ռն իսկ կը փլլի:

Աղօթքն աղբի՛ւրն է անդու՛լ ուրկէ սիրտերն յուսահատ
Կ'ըմպեն յոյսի անոյշ կաթ.
Ան ովասի՛սն է ծաղկուն անապատին մէջ կեանքի,
Ուր խոնջ հոգին կը հանգչի:

Աղօթքն ուղի՛ն է անյայտ՝ որ խունկի պէս կ'երկարի
Մինչեւ խորա՛նն երկնքի.
Ան արդարին մաքրագոյն եւ սուրբ համբո՛յրն է սիրոյ՝
Որ կ'ընծայուի Աստուծոյ...:

84. ՄՈՒԹԷՆ ԼՈՅՍ

Բանտարկեա՛լ էի - ֆակեցի՛ր զիս, Տէ՛ր,

Առանձին ու որք – եղար ինձ ընկե՛ր.
 Չունէի երդիք – տո՛ւն տուիր ինձի,
 Մոլորա՛ծ էի – ցուցուցիր ուղի՛:
*Այս նոր օրերէս մինչեւ ժամս յետին,
 Սրտիս ու մարմնիս խորերէն ոսկի՝
 Հաղար ցնծութեան շարակա՛ն քեզի,
 Օրհնութեան արցո՛ւնք եւ խո՛ւնկ,
 Աստուա՛ծ իմ:*

Խո՛րն էի վիհին – հանեցիր զիս վե՛ր,
 Ու խաւարին մէջ – եղար ինձ լապտե՛ր.
 Սովատա՛նջ էի – հա՛ց դարձար սրտիս,
 Ծարաւ արտի՛ պէս – ոռոգեցիր զիս:
Այս նոր օրերէս մինչեւ ժամս յետին...

Սգաւո՛ր էի – գգուեցի՛ր քննոյշ,
 Հիւանդ եւ անգօ՛ր – տուիր բոյժ եւ ո՛յժ.
 Մերկ էի ու բոկ – վա՛րդ հագցուցիր ինձ,
 Դառն ու ձա՛ն էի – դեմքիս տուիր ցի՛նծ:
Այս նոր օրերէս մինչեւ ժամս յետին...

Խոնջ էի ու բե՛կ – ցո՛ւպ եղար լանջիս,
 Դողդոջ ու մսկոտ – գի՛րկըդ առիր զիս.
 Գերեզմանն էի – բացիր դո՛ւռն իմ փակ,
 Ու թէեւ մեռա՛ծ – հոգւոյս տուիր կեա՛նք...:
Այս նոր օրերէս մինչեւ ժամս յետին...:


35. Ս Է Ր

Սէ՛րն է սիւնը Յիսուսի սուրբ կըրօնին,
 Սիրող սիրտը կը վառի զերդ մորեցին.
 Սէրն է անհո՛ւն, մօտ եւ հեռուն չի՛ նանչնար,
 Սիրող սիրտը Յիսուսի՛ է սիրահար:

*Սէրն է խորհո՛ւրդ, շատ քիչերո՛ւն կը բացուի,
 Անսէր մարդն է բուրվառ անհո՛ւր, յիրաւի.
 Սիրոյ հուրով, Խօսքին ոյժով մենք քալենք,
 Սիրոյ ճամբով ապրինք, գործենք եւ պաշտենք:*

Սէրն է խորհուրդ, մեղրածորան սո՛ւրբ խորան,
 Մարդոց սրտին դեղ ու դարմա՛ն, բալասա՛ն.
 Սէրն կը փոխէ՛ մարդը իր չար գործերէն,
 Սիրոյ փարիլ, սիրով ապրիլն է վերէ՛ն:
*Սէրն է խորհո՛ւրդ, շատ քիչերո՛ւն կը
 բացուի...:*

Սիրոյ կեանքն է մաքրամաքուր, հարազատ,
 Անսէր կեանքն է խաւար, պիղծ եւ մեղսապարտ:
 Սէ՛րն է սիւնը ճշմարտութեան անապակ,
 Սիրով փալել՝ լոյսով փալել է համակ:
*Սէրն է խորհո՛ւրդ, շատ քիչերո՛ւն կը
 բացուի...:*



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք
Դասաւանդութեան հիմնական կառուցումով
Լսարանական բաժին

ՍԱՂՄՈՍՆԵՐ

Սաղմոս 1	9
Սաղմոս 15 (14)	9
Սաղմոս 19 (18)	10
Սաղմոս 23 (22)	11
Սաղմոս 26 (25)	11
Սաղմոս 31 (30)	12
Սաղմոս 36 (35)	13
Սաղմոս 37 (36), 1-15	14
Սաղմոս 43 (42)	15
Սաղմոս 51 (50)	15
Սաղմոս 67 (66)	17
Սաղմոս 84 (83)	17
Սաղմոս 90 (89), 14-17	19
Սաղմոս 91 (90)	19
Սաղմոս 93 (92)	20
Սաղմոս 100 (99)	21
Սաղմոս 113 (112)	21
Սաղմոս 116 (114)	22
Սաղմոս 118 (117)	23
Սաղմոս 119 (118), 1-2 եւ 9-20	23
Սաղմոս 119 (118), 89-105	24
Սաղմոս 123 (122)	26
Սաղմոս 148	26

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐՆԵՐ

28

ԱՂՕԹՔՆԵՐ ԵՒ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

Տէրունական աղօթք	49
Հանգանակ Հաւատոյ	50
Հաւատքի դաւանութիւնը	51
Պահպանեալ գմբզ	53
Առաջնորդ կեանք	53
Աղօթք Նարեկէն	54
Գոհամամբ գլէն	55
Ով բարերար Հայր երկնաւոր	55
Աղօթք Օգոստինոսէն	56
Աղօթք Ս. Բարսեղէն	56
Ով Հայր, օրհնէ մեր սեղան	57
Հաւատով խոստովանիմ	57
Հաշակեցոյի խաղաղութեամբ	66
Ջիւղիւթիւնի վերայ	67
Տէր իմ Աստուած	67
Զգործս ձեռաց մերոց	67
Զբարձրեալն գրիստոս	68
Խաչ քո եղիցի	68
Տէր, ուղղեալ գգնացս մեր	68
Տէր, մի՛ դարձուցաներ գերեսս քո	69
Լուսովդ քո, Քրիստոս	69
Անկանիմբ առաջի քո	70
Յամենայն ժամու աղաչանք իմ	70
Քրիստոս իմ Աստուածս է	70

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Ս. Թարգմանչաց - Որք զարդարեցին	72
2. Ս. Թարգմանչաց - Որ ըզչնորհս	72
3. Ս. Առաքելոց - Աշակերտք Քրիստոսի	73
4. Ս. Գրիգոր Լուսաւորչի - Հրաշափառ Աստուած	73
5. Խաչվերացի - Զօրութիւն սուրբ խաչի	74
6. Ս. Աստուածածնի - Ով գերահրաշ ծաղիկ	74
7. Ս. Աստուածածնի - Նահապետացն Աբրահամու	75

8. Ս. Աստուածածնի - Նոր Սիրովն ծընեալ մանկունք	75
9. Վերափոխման - Աստուածածին, ամպ լուսաւոր	76
10. Աստուածածնի Վերափոխման - Այսօր ժողովեալ	76
11. Խաչվերացի - Խաչի քո, Քրիստոս	77
12. Ս. Ծննդեան - Խորհուրդ մեծ եւ սքանչելի	78
13. Տաղ Ս. Ծննդեան - Այսօր տօն է սուրբ ծննդեան	78
14. Հրազաւոյց Ծննդեան - Զանճառելի լուսոյ մայր	78
15. Առաւօտու երգ - Առաւօտ լուսոյ	79
16. Ս. Յակոբ Մծբնացիի - Հայրապետ սուրբ	80
17. Տաղ Մկրտութեան - Ով զարմանալի խորհուրդ այս	81
18. Ս. Ղեւոնդեանց - Արեգակն արդարութեան	81
19. Ս. Վարդանանց - Նորահրա՛չ պըսակաւոր	82
20. Երգ Արեւագալի - Յարեւելից մինչ ի մուտս	82
21. Երգ Արեւագալի - Լո՛յս, Արարիչ լուսոյ	83
22. Երգ Խաղաղական - Նայեա՛ց սիրով, Հայրըդ գթած	84
23. Մեծ Պահփի - Որ ըզխորհուրդ քո գալըստեանդ	84
24. Ապաշխարութեան - Հա՛յր բազումողորմ	85
25. Ապաշխարութեան - Ծով կենցաղոյս	85
26. Ապաշխարութեան - Եկեսցէ, Տէ՛ր, ի վերայ մեր	86
27. Ծաղկագարդի - Որ վերօրհնիս յաթորըս	87
28. Ծաղկագարդի - Թագաւոր գոլով	87
29. Աւագ Երեմիայի - Իմաստուն կուսանքըն	87
30. Ոտնլուայի - Այսօր կանգնեցաւ աւագան	88
31. Ս. Յարութեան - Այսօր յարեաւ	88
32. Ս. Յարութեան - Քրիստոս յարեաւ ի մեռելոց	89
33. Ս. Յարութեան - Կանանցըն կանխելով	89
34. Երգ Իզաբելից - Փա՛ռք յարութեան քո Տէր	90
35. Ապրիլեան Նահատակաց - Այսօր բերկեալ եկեղեցի	90
36. Համբարձման - Համբարձաւ Տէրըն մեր յերկինս	91
37. Հոգեգալստեան - Առաքելոյ աղանոյ իջանելով	92
38. Հոգեգալստեան - Այսօր երկնայինքն ուրախացան	92
39. Հոգեգալստեան - Ի համբառնալ Բանին	93
40. Հոգեգալստեան - Արեգակն արդարութեան	93
41. Հոգեգալստեան - Աղբիւր կենաց	94
42. Ս. Հովսիսիմեանց - Անձինք նըւիրեալք	94
43. Շողակաթի - Ուրախ լեր	95
44. Շողակաթի - Էջ միածինն	95

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Խորհուրդ խորին	97
Սուրբ Աստուած	97
Մարմին տէրունական	98
Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ	98
Օրհնեալ է Աստուած	98

ԵՐԳԵՐ

1. Հայրապետական Օրհներգ Մեծի Տանն Կիլիկիոյ	100
2. Մաղթերգ Հայց. Եկդ. Կիրակնօրեայ Դպրոցներու	100
3. Կիլիկիա	101
4. Օրհներգ Հայրապետական	102
5. Եկեղեցին Հայկական	102
6. Հա՛յ Ապրինք, Եղբարք	103
7. Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը	104
8. Սահակ Մեսրոպ	105
9. Սահակ Մեսրոպ	105
10. Ով մեծաւաճէ դու լեզու	106
11. Եղիշէ	107
12. Ետեւէս եկուր	108
13. Ծննդեան ծառ	109
14. Սուրբ Ծնունդ	109
15. Երգ Ծննդեան	110
16. Քաջ Վարդան	110
17. Վարդանանց Յիշատակին	111
18. Պլպուլն Աւարայրի	112
19. Վարդանի Երգը	113
20. Երգ Վարդանայ	113
21. Մեր շարքերն են ամրակուռ	114
22. Մարտիրոսներու Երգը	114
23. Իմ ուխտը	115
24. Ալեյուիս	116
25. Փրկչին Ծնունդը	117
26. Բեթլեհեմի Աստղին	118
27. Հրեշտակներ	118

28. Խաչը	119
29. Հայի Մաղթանք	120
30. Ահա կու գայ	120
31. Երգ փառաբանութեան	121
32. Յորդառատ սէր	122
33. Աղօթքը	123
34. Մուրէն լոյս	123
35. Սէր	124



ՏՊԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻՆԿԻՈՑ
ՀԱՅ ՏԻՊ ԶՈՄՓԻԿՐԱՑ
ԱՆԹՈԼԻԱՍ - ԼԻՏԱՆԱՆ